

.Հավելված
ՀՀ կառավարության 2003 թվականի
նոյեմբերի 6-ի N 1522 - Ն որոշման

ՆԱԽԱԳԻԾ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ՌԱԶՄԱԿԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Բովանդակություն

Ներածություն

ԳԼՈՒԽ I. Կոռուպցիայի սահմանումը, պատճառները և դրա դեմ պայքարի հիմնական միջոցներն ու ուղղությունները

1. Կոռուպցիայի սահմանումը և պատճառները
2. Կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական միջոցները
3. Կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական սկզբունքները
4. Կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությունները

ԳԼՈՒԽ II. Տնտեսական ոլորտի հիմնախնդիրները

Պետական ֆինանսներ, գույք եւ մասնավորեցման հիմնախնդիրներ

ԳԼՈՒԽ III. Քաղաքական կոռուպցիա

ԳԼՈՒԽ IV. Հանրային կառավարում

ԳԼՈՒԽ V. Իրավապահ մարմիններ

ԳԼՈՒԽ VI. Դատական համակարգ

ԳԼՈՒԽ VII. Եզրափակիչ դրույթներ

Ներածություն

Առանձնակի կարևորելով կոռուպցիայի դեմ պայքարը ՀՀ վարչապետի 2001թ. հունվարի 22-ի N 44 որոշմամբ ստեղծվեց ՀՀ կառավարության հակակոռուպցիոն ծրագրերի հետ կապված աշխատանքները համակարգող հանձնաժողով:

2001թ. ՀՀ կառավարության հակակոռուպցիոն ռազմավարության հայեցակարգն արժանացավ միջազգային կազմակերպությունների հավանությանը, որի արդյունքում Համաշխարհային բանկի տրամադրած դրամաշնորհի շրջանակներում մշակվեց ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը:

Գիտակցելով կոռուպցիայի վտանգը՝ Հայաստանի իշխանությունները կոռուպցիայի դեմ պայքարը հայտարարեցին որպես գերակա ուղղություն և վերջին տարիներին կոռուպցիայի դեմ ուղղված մի շարք քայլեր են ձեռնարկել: Մինչ այժմ մի շարք ուղղություններով (պետական կառավարման, հարկային եւ բանկային համակարգեր) իրականացված բարեփոխումների արդյունքում առկա է զգալի դրական տեղաշարժ: Մասնավորապես, ընդունվել են տասնյակ իրավական ակտեր, որոնք ունեն հակակոռուպցիոն ուղղվածություն, ներդրվել են հակակոռուպցիոն ուղղվածություն ունեցող այնպիսի նոր համակարգեր, ինչպիսիք են քաղաքացիական ծառայության ինստիտուտը, պետական գնումները, ստուգումների կազմակերպման եւ անցկացման, պաշտոնատար անձանց գույքի ու եկամուտների հայտարարագրման, լիցենզավորման, իրավաբանական անձանց պետական գրանցման եւ նոտարիատի նոր համակարգերը, կանոնակարգվել են պետական ծառայության հատուկ տեսակները (նստիկանական, զինվորական, մաքսային, հարկային եւ դիվանագիտական): 2003թ. նոյեմբերի 1-ին ՀՀ կառավարությունն ընդունեց ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունն ու դրա իրականացման միջոցառումների ծրագիրը, որը 2003թ. դեկտեմբերի 1-ին հաստատվեց Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից: 2004թ. ՀՀ Նախագահի հրամանագրով ստեղծվեց Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ՝ ՀՀ վարչապետի ղեկավարությամբ և ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողով՝ ՀՀ Նախագահի խորհրդականի ղեկավարությամբ: 2004թ. հունվարի 20-ին Հայաստանի Հանրապետությունը անդամակցեց Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարող երկրների խմբին՝ GRECO-ին. ակտիվորեն մասնակցում է Տնտեսական գարգացման և համագործակցության կազմակերպության անգումային տնտեսությամբ երկրների կոռուպցիայի դեմ պայքարի գանգի աշխատանքներին: 2005թ. Հայաստանի Հանրապետությունը ստորագրել և վավերացրել է Կոռուպցիայի դեմ պայքարի քրեական և քաղաքացիական իրավունքի եվրոպական կոնվենցիաները: 2005թ. Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է Կոռուպցիայի դեմ պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիան, որի վավերացումը գործընթացում է:

Հակակոռուպցիոն ռազմավարության նպատակը կոռուպցիայի հաղթահարումն է, այն ծնող եւ դրա տարածմանը խթանող պատճառների ու պայմանների վերացումը.

հանրապետությունում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ձևավորումը, որն էլ իր հերթին կնպաստի ժողովրդավարական ինստիտուտների, քաղաքացիական հասարակության և իրավական պետության հիմնավոր հաստատմանը, ազատ տնտեսական մրցակցությանը, տնտեսության զարգացմանն ու աղքատության նվազեցմանը:

Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության փաստաթղթում տրված էր կոռուպցիայի սահմանումը, պատճառները և դրա դեմ պայքարի ուղղությունները: Ծրագրում կոռուպցիայի դեմ պայքարի նկատմամբ ցուցաբերվել է համակարգային մոտեցում՝ առանձնացնելով կոռուպցիայի դեմ պայքարի մի շարք գերակա ուղղություններ, որոնց իրականացման համար մշակվել էր 98 միջոցառում, որոնց կատարումը նախատեսված է մինչև 2007 թ.:

Հատուկ ուշադրության է արժանացել կոռուպցիայի դեմ պայքարում հասարակության լայն մասնակցության խնդիրը՝ կարևորելով այդ գործընթացի նկատմամբ հասարակության բոլոր շերտերի՝ պետական և ոչ պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների, քաղաքական բոլոր ուժերի մոնիտորինգի դերը, այն բանի գիտակցումով, որ կոռուպցիայի դեմ պայքարը համընդհանուր խնդիր է՝ ծառայած ոչ միայն իշխանությունների, այլև ողջ հասարակության առջև: Հայաստանի համար որպես հատուկ կարևորության խնդիրներ, առանձնացվել են բնակչության մեծ մասի մոտ քաղաքական մշակույթի ձևավորման, անկախ դատական համակարգի կատարելագործման, հասարակության որոշ խավերի մոտ սպառողական հոգեբանության վերափոխման, հանրապետությունում օրենքի առջև բոլորի հավասարության և պատժի անխուսափելիության սկզբունքի կիրառման խնդիրները:

Կոռուպցիայի դեմ պայքարը շարունակական գործընթաց է, ուստի ՀՀ կառավարությունը մշակել է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը նոր ժամանակահատվածում, որը ներառում է 2007-2010 թթ.: Կոռուպցիայի դեմ պայքարի նոր փուլը ենթադրում է ոչ միայն օրենսդրական դաշտի ձևավորում, այլ նաև արդեն ընդունված օրենքների անշեղորեն կատարման ապահովում:

ՀՀ կառավարությունը լիահույս է, որ ռազմավարությունը կդառնա լայն քննարկման առարկա և կարվի հնարավոր առավելագույնն ապահովելու հասարակության բոլոր շերտերի անմիջական մասնակցությունը դրա իրականացման աշխատանքներին, ինչպես նաև այդ աշխատանքների իրականացման ընթացքի նկատմամբ վերահսկողությամբ:

Գլուխ I. Կոռուպցիայի սահմանումը, պատճառները և դրա դեմ պայքարի միջոցներն ու ուղղությունները

1. Կոռուպցիայի սահմանումը եւ պատճառները Հայաստանում

Կոռուպցիան անձնական կամ այլ շահադիտական նպատակով, տարբեր ձևերով արտահայտված (գործողությամբ կամ անգործությամբ) ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահումն է: Կոռուպցիան որպես վստահված իշխանության

չարաշահում ունի մի շարք դրսևորումներ և բազում «նրբերանգներ», որոնցից են կաշառակերությունը՝ կաշառք ստանալը, տալը, կաշառքի միջնորդությունը, կաշառքի շորթումը, հովանավորությունը, պաշտոնական դիրքի կամ կապերի չարաշահումը, պաշտոնական լիազորությունները չարաշահելը կամ անցնելը, պաշտոնական կեղծիքը, պաշտոնական դիրքի օգտագործմամբ պետական սեփականության յուրացումն ու վատնումը, ինչպես նաև պաշտոնական այլ չարաշահումները:

Կոռուպցիան դիտարկվում է երկու մակարդակում՝

1.«Վերևների» կոռուպցիա /քաղաքական կամ պետական իշխանության չարաշահում/ դա անձնական օգուտից կամ շահից դրդված քաղաքական գործիչների ու բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից քաղաքական որոշումներ կայացնելիս իրենց վստահված քաղաքական իշխանության չարաշահումն է:

2.«Ներքևների» կոռուպցիա (վարչական կոռուպցիա)՝ դա բնորոշ է միջին և ստորին օղակի պաշտոնատար անձանց, որոնք անենօրյա շփումների մեջ են քաղաքացիների հետ:

Կոռուպցիայի այս երկու մակարդակների տարանջատումը շատ կարևոր է կոռուպցիայի հասարակական ընկալումները քննության առնելու և դրանց դեմ պայքարը համակարգելու տեսանկյունից, քանի որ երկրորդ մակարդակը շատ հաճախ որպես կոռուպցիա չի ընկալվում, այլ դիտվում է «մատուցվող ծառայություններն արագացնելու նպատակով արվող վճարում»:

Հայաստանում վերջին տարիներին առկա է կոռուպցիայի կրճատման միտում: Հայաստանում կոռուպցիայի դրսևորման առանձնահատկությունների, դրա տարածման գործոնների և ծավալների ճշգրիտ բացահայտումը կոռուպցիայի բազմաբնույթ երևույթի դեմ պայքարի առաջնային նախապայմաններից է:

Խորհրդային համակարգից երկիրը ժառանգել է հսկայական բյուրոկրատական ապարատ: Բյուրոկրատական ապարատի կրճատումներից հետո այն ունակ է շատ արագ վերականգնվել և քանակապես աճել, քանի որ վերջնականապես հստակեցված և տարանջատված չեն պետական մարմինների գործառույթները: Քաղաքացիական ծառայության համակարգի բարեփոխումները դեռևս գտնվում են ներդրման փուլում: Կառավարման ապարատի մեծ չափերը, հանրային ծառայությունների ցածր որակը կոռուպցիայի գոյության հնարավոր պատճառներից են: Չնայած պետական կառավարման համակարգի բարեփոխումների ընթացքում քայլեր են ձեռնարկվել պետական ապարատի օպտիմալացման, աշխատողների թվի կրճատման, աշխատողների աշխատավարձի բարձրացման ուղղությամբ, սակայն այս աշխատանքները դեռևս կարիք ունեն կատարելագործման:

Պետական ոլորտում կոռուպցիա ծնող դրդապատճառների շարքում հարկ է առանձնացնել քնակչության կողմից իրենց իրավունքների և պետական պաշտոնյաների պարտականությունների մասին անհրազեկությունը, պետական ոլորտի ծառայություններում ընդգրկված աշխատողների վարձատրության մակարդակի, նյութական խրախուսման, սոցիալական պաշտպանվածության համակարգերի անհամապատասխանությունը նրանց ունեցած լիազորություններին և պարտականություններին, ինչպես նաև նրանց մասնագիտական պատրաստվածության անբավարար մակարդակը և կոռուպցիայի համար հնարավոր պատժելիության ռիսկի ոչ համարժեք աստիճանը:

Անցումային տնտեսություն ունեցող երկրներում կոռուպցիոն դրսևորումները բնութագրվում են՝

բոլոր ոլորտներում իրականացվող բարեփոխումների գործընթացում կոռուպցիոն գործողությունների արագ ներթափանցման և արմատավորման դեմ պայքարի բացակայությամբ կամ ցածր արդյունավետությամբ.

օրենսդրությունը երկակի չափորոշիչներով կիրառելու պրակտիկայով, ինչպես օրենսդրության անկատարության, այնպես էլ կիրառմանն ուղղված անարդյունավետ վարչարարության առումով.

իշխանական լիազորություններով օժտված պաշտոնատար անձանց վարձատրության և ընդհանուր սոցիալական պաշտպանվածության ցածր մակարդակի հետևանքով վերջիններիս կողմից եկամտի լրացուցիչ աղբյուրների փնտրմամբ.

հասարակության կողմից կոռուպցիայի ընկալմամբ, որպես ձևավորված գործարար սովորույթի կամ որոշակի հարգերի յուժան համար լավագույն արդյունավետ միջոցի:

Արդյունքում, կոռուպցիան ի չիք է դարձնում բարեփոխումների ընթացքում ակնկալվող ցանկալի արդյունքները, առաջացնում է հասարակական մշտական լարվածություն:

Հայաստանում, ինչպես և հետխորհրդային մյուս երկրներում, օլիգարխիայի առաջացումը հենվել է տնտեսական ոլորտի կարգավորման նոր հարաբերությունների ձևավորման ընթացքում հանրային շահերը նեղ խմբային շահերին ծառայեցնելու և այդ ճանապարհով տնտեսական մոնոպոլ կամ գերեկամուտներ ստանալու վրա:

Կոռուպցիայի օրինակներ են արձանագրվել նաև մասնավորեցման ոլորտում: Հայաստանում, ինչպես և անցումային փուլում գտնվող այլ երկրներում, մասնավորեցումը հնարավորություն ընձեռեց համեմատաբար ոչ մեծ ներդրումներով դառնալ անհամեմատ մեծ արժեք ներկայացնող գույքի սեփականատեր:

Հայաստանում տեղի ունեցած զարգացումներից է ստվերային տնտեսության միջոցով կապիտալի կուտակումը: Ընդ որում, ստվերային տնտեսությունը որպես կանոն, գործում է բացառապես կոռումպացված «իրավահարաբերությունների» միջավայրում: Ստվերային տնտեսության օգտագործմամբ շահավետ կարող են դառնալ՝

ա) պետական ֆինանսական միջոցների տարբեր եղանակներով տիրապետման գործընթացը.

բ) մասնավորեցման գործընթացը.

գ) բնական /տեխնոգեն/ հիմքերով ձևավորված մենաշնորհային ծառայությունների ու սպասարկումների ոլորտները (էներգետիկա, կոմունալ ծառայություններ, հեռահաղորդակցություն և այլն).

դ) կազմակերպական և այլ հիմքերի վրա կառուցվող մենաշնորհները, մասնավորապես, նավթամթերքի, հացահատիկի, այլուրի, առաջին անհրաժեշտության սննդամթերքի և այլնի ներմուծումների ոլորտում.

ե) իրավապահ մարմինների կողմից, օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունների սահմանազանցմամբ իրականացվող կոռուպցիոն դրսևորումները (հովանավորություն, կաշառակերություն և այլն):

Ձարգացած քաղաքացիական հասարակությունը կարևոր գործիք է պետական իշխանությունների գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու և կոռուպցիան կանխարգելելու տեսանկյունից: Խորհրդային ժամանակի ամբողջատիրության ժառանգությունը, ինչպես նաև թույլ քաղաքացիական հասարակությունը հնարավորություն չեն տվել հասարակությանը վերահսկելու պետական հաստատությունների գործունեությունը: Անկախության ձեռքբերումից ի վեր որոշ զարգացումներ են նկատվում քաղաքացիական հասարակության այնպիսի բաղադրիչներում, ինչպիսիք են անկախ մամուլը և հասարակական կազմակերպությունները:

Հայաստանի հանրային կառավարման համակարգի որոշ ոլորտներում կոռուպցիայի ռիսկն ավելի մեծ է: Դրանք հիմնականում հանրային այն ծառայություններն են, որտեղ մեծ է պետական ծառայողների և բնակչության միջև շփումների հաճախականությունը, ինչպես նաև այն ոլորտները, որտեղ պետական ծառայողներն ավելի մեծ ազատություն ունեն տնտեսական խնդիրները տնօրինելու հարցում: Կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված միջոցառումների առավել մեծ կարիք է զգացվում՝

- տնտեսությունում,
- հարկային, մաքսային ծառայություններում,
- դատական և իրավապահ մարմինների համակարգերում,
- կրթության և առողջապահության բնագավառներում:

Այսպիսով, Հայաստանում կոռուպցիայի գոյության պատճառներն են.

- Պետության նշանակության, դերի և խնդիրների պատկերացումների խաթարումը.
- Իրավական պետության գլխավոր սկզբունքի՝ իրավունքի (օրենքի) գերակայության ոտնահարումը.
- Գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների տարանջատման ոչ լիարժեքությունը.
- Սոցիալապես և նյութապես խոցելի, ուռճացված պետական ապարատը, որը պետական կառավարումը դարձնում է անարդյունավետ.
- Ստվերային տնտեսության մերժելի չափերը.
- Ժողովրդավարական պետությանը բնորոշ ինստիտուտների անկատարությունը.
- Նոր հասարակական հարաբերությունների ձևավորման գործում քաղաքական և տնտեսական ռազմավարությունը հասարակությանը մատչելի դարձնելու անարդյունավետությունը.

- Օրենսդրության ձևավորման գործընթացում հակակոռուպցիոն գործոնի թերագնահատումը.
- Կոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերման և կոռուպցիոն տարրերին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ իրավապահ մարմինների և դատական համակարգի անբավարար գործունեությունը, ինչպես նաև պատժի անխուսափելիության սկզբունքի խախտումը.
- Մարդու քաղաքացիական իրավունքների, գործող օրենսդրության, սոցիալական արդարության պաշտպանության մեխանիզմների անկատարությունը.
- Պետական կառավարման գործառույթների պատշաճ հսկողության և վերահսկողության թուլությունը.
- ՁԼՄ-ների պասսիվ կամ ընտրողական մասնակցությունը (լուսաբանումը) հասարակական և քաղաքական կյանքին:

2. Կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական միջոցները

Կոռուպցիոն երևույթների կանխարգելման անհրաժեշտ պայման է օրենքի գերակայության վրա հիմնված պետական արդար կառավարման համակարգի ստեղծումը, որը միմյանց լրացնող հաստատությունների, օրենքների, կանոնակարգերի և արժեքների համակարգ է: Գործադիր, օրենսդիր, դատական իշխանության մարմինների, ինչպես նաև պետական ծառայության, վերահսկողության մարմինների և աուդիտորական հաստատությունների, լրատվամիջոցների, ոչ պետական հատվածի, գնումների, տեղական ինքնակառավարման համակարգերի հիմքում պետք է դրվեն արդյունավետ կառավարման համակարգի սկզբունքները:

Հակակոռուպցիոն ռազմավարության հաջողության համար կարևորվում են կոռուպցիոն երևույթների ժամանակին բացահայտումն ու պատասխանատվության ենթարկելը: Կառավարության ու նրա կողմից կոռուպցիան հաղթահարելու կարողության հանդեպ հասարակության հավատը միշտ էլ կախված կլինի այն հանգամանքից, թե ինչ չափով են պարտադրվում օրենքները և ինչպես են կիրառվում դրանց խախտման համար նախատեսվող պատասխանատվության մեխանիզմները: Կոռուպցիոն երևույթների հաղթահարմանն ուղղված պատասխանատվության մեխանիզմների կիրառումը ենթադրում է իրավապահ մարմինների համատեղ և ներդաշնակ աշխատանք՝ միտված մեկ ընդհանուր նպատակի՝ կոռուպցիոն երևույթների բացահայտմանն ու դատապարտմանը:

Հանրային իրազեկությունը կոռուպցիայի դեմ պայքարի կարևորագույն տարրերից է: Արդյունավետ հակակոռուպցիոն ռազմավարություն իրականացնելու տեսանկյունից շատ կարևոր է, որպեսզի հասարակությունն իր մասնակցությունը բերի կոռուպցիայի հաղթահարման գործին: Կոռուպցիան հաղթահարելու համար կառավարության կողմից իրականացվող միջոցառումներին անպայման պետք է մասնակից դառնա քաղաքացիական հասարակությունը, այդ գործընթացների մասին նրան իրազեկելը, կփոխի պետության հանդեպ հասարակության վերաբերմունքը, պետական ծառայություններից օգտվելու մեթոդները:

Հակակոռուպցիոն ցանկացած գործունեության շեշտադրումն առաջին հերթին պետք է լինի անձնական կամ այլ շահադիտական նպատակով պաշտոնական դիրքի որևէ չարաշահում թույլ չտալը կամ այն կանխարգելելը: Այս ամենին հասնելու արդյունավետ միջոցներ են պետական պաշտոնյաների համար նախատեսված կանոնակարգերը, էթիկայի նորմերը:

Կոռուպցիոն երևույթների հաղթահարման գործոն է նաև պետական ծառայողներին բաց գործընթացով պատասխանատվության ենթարկելը և այդ փաստերի մասին հանրությանը իրազեկելը: Քաղաքականության մշակման հարցերի շուրջ հանրային քննարկումների բացակայությունը և որոշումների կայացման ոչ թափանցիկ ընթացակարգերը հանգեցնում են նրան, որ հասարակությունն օտարվում է կառավարման գործընթացից: Հանրությանը հանրաժողովների, խորհրդակցությունների կազմակերպման միջոցով պետք է կանոնավոր ներգրավել քաղաքականության մշակման և դրա իրականացման նկատմամբ մոնիտորինգի գործընթացներին՝ դրան ծառայեցնելով նաև ինչպես ներկայացուցչական խմբերի հետ ուղղակի հանդիպումները, այնպես էլ տեղեկատվության տեխնիկական միջոցները: Սրանով ոչ միայն կնվազի կոռուպցիան՝ քաղաքականության մշակման ասպարեզում, այլ նաև կբարձրանան քաղաքականության արդյունավետությունն ու որակը:

Պետական մարմինների և ֆինանսների վերահսկողության սկզբունքը Հայաստանում կատարելագործման կարիք ունի: Պատասխանատվության միջոցները խստացնելուն զուգահեռ անհրաժեշտ է կատարելագործել կոռուստացված գործունեության բացահայտման և կանխարգելման մեխանիզմները: Զգալի բարելավման կարիք ունեն ստուգող և վերահսկողություն իրականացնող մարմինների գործունեությունը, որոնք ներքին և արտաքին աուդիտի օղակներ են: Ազգային ժողովի վերահսկիչ պալատը պետք է լինի ոչ միայն ֆինանսական վերահսկողություն իրականացնող կարևորագույն մարմին, այլ նաև արտաքին վերահսկողություն իրականացնող մարմին, որը կարևոր դեր կունենա կոռուպցիոն երևույթների բացահայտման և կանխարգելման գործում:

Կոռուպցիայի դեմ պայքարի լավագույն միջոցն իրավունքի գերակայության և օրենքի առաջ բոլորի հավասարության սկզբունքի ապահովումն է: Գործող օրենսդրական դաշտի անկատարությունը, անհստակությունը, իրարամերժությունն ու հակասությունները խոցելի են դարձնում վարչական, իրավապահ ու դատական մարմինների կողմից օրենքների կիրառման հնարավորությունները: Կոռուպցիային նպաստող սողանքներն ու հակասությունները վերացնելու նպատակով անհրաժեշտ է սկսել օրենքների կատարելագործման գործընթացը՝ այն համապատասխանեցնելով ՀՀ Սահմանադրությունում կատարված փոփոխությունների պահանջներին, շեշտադրում կատարելով պետական իշխանության և իշխանական լիազորություններով օժտված մարմինների գործառնությունները տարանջատելու և օրենքի (հատկապես տնտեսական ոլորտին վերաբերող) դրույթների երկակի մեկնաբանության հնարավորությունը բացառելու վրա:

Օրենքների կիրառման գործընթացը պահանջում է օրենքի մշակման մշակույթի, կենսագործման մեխանիզմների բարելավում:

Օրենսդրական դաշտի կարգավորման համար կարևոր նշանակություն ունեցավ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որով սահմանվեցին իրավական ակտերի տեսակները, կանոնակարգվեցին դրանց մշակման, փորձաքննության, ընդունման, իրացման գործընթացները: Սակայն օրենքների, ենթաօրենսդրական ակտերի ընդունման և պետական մարմինների կողմից որոշումների կայացման գործընթացները դեռևս չեն ամբողջականացնում շահագրգիռ կազմակերպությունների կողմից այդ համակարգում համարժեք ներդրում ունենալու պատշաճ մեխանիզմները: Այս տեսանկյունից հատկապես կարևորվում է իրավական ակտերի մշակման փուլում հասարակական կազմակերպությունների մասնակցությունը: Օրենքների կենսագործման կարևոր փուլերից է՝ դրանց իրականացումը, քանի որ իրական ժողովրդավարությունը ենթադրում է ոչ միայն օրենքների առկայություն, այլ նաև դրանց իրականացում: Իրավական ակտերի կիրառումն ապահովելու համար անհրաժեշտ է տեղեկատվության միջոցներով, այդ թվում՝ էլեկտրոնային, հասարակությանն իրազեկել ընդունված իրավական ակտերի մասին, քանի որ միայն ՀՀ պաշտոնական տեղեկագրում իրավական ակտերը տպագրելի բավարար չէ օրենքները՝ հասարակությանը մատչելի դարձնելու համար: Այս գործընթացում կարևոր է նաև օրենսդրական ակտերի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը:

Օրենսդրական աշխատանքների կանոնակարգման գործում կարևորվում է «Լոբբինգի մասին» օրենքի ընդունումը, գործող օրենքների համապատասխանեցումը միջազգային չափանիշներին:

Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային մի շարք ակտերին միանալը կարևորագույն գործոն է կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ կազմակերպման և օրենսդրական դաշտի կարգավորման խնդրում:

3. Կոռուպցիայի դեմ պայքարի սկզբունքները

Կոռուպցիայի դեմ պայքարում պետք է ղեկավարվել հետևյալ սկզբունքներով.

1. Կոռուպցիայի նկատմամբ բազարձակ հաղթանակ տանել հնարավոր չէ: Ավելին, կայուն իշխանության և զարգացած հասարակության պայմաններում կոռուպցիան տեխնիկապես օգտակար ահագնազ է իշխանության աշխատանքի մեթոդներում գոյություն ունեցող թերությունների մասին:

2. Կոռուպցիայի դեմ պայքարը միանգամայն չի կարող լինել: Կոռուպցիայի դեմ տարվող ցանկացած արշավին կարող է հետևել կոռուպցիայի նոր, ավելի վտանգավոր չափերի ու հզոր այլք:

3. Կոռուպցիայի դեմ պայքարում չի կարելի սահմանափակվել միայն օրենսդրական մեթոդներով և առանձին երևույթների դեմ պայքարով: Ավելին, այն պայմաններում, երբ կոռուպցիան հասել է հսկայական չափերի և սողոսկել է արդեն իշխանության ամենաբարձր մակարդակները, ավելի արդյունավետ է կազմակերպել պայքար կոռուպցիա ծնող պայմանների ու պատճառների դեմ, քան անկազմակերպ արշավել նրա դրսևորումների դեմ:

4. Կոռուպցիայի դեմ պայքարը կարող է արդյունավետ լինել միայն այն դեպքում, երբ այն համընդգրկուն է, համակարգված է, տարվում է մշտապես և դրան են ուղղված իշխանության և հասարակության ողջ ուժերը:

5. Հակակոռուպցիոն ծրագիրը պետք է իրականացվի պետության բարձրագույն իշխանության կողմից, քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ առավելագույն համագործակցությամբ:

6. Կոռուպցիայի հետևանքով պետությանն ու հասարակությանը հասցված վնասները կարող են այնքան վտանգավոր լինել, որ հակակոռուպցիոն ռազմավարության վրա ծախսվող ցանկացած խելամիտ միջոց կարող է կարճ ժամանակում փոխհատուցվել:

Հակակոռուպցիոն քաղաքականությունը պետք է ներառի միջոցառումներ, որոնք պետք է լուծեն հետևյալ խնդիրները.

- կոռուպցիայի դեմ պայքարի կազմակերպում նրա բոլոր մակարդակներում.
- կոռուպցիա ծնող պայմանների և պատճառների վերացում.
- կոռուպցիայի բոլոր տեսակի դրսևորումների նկատմամբ հասարակական անհանդուրժողականության մթնոլորտի ձևավորում:

Անցումային փուլում կոռուպցիայի ակտիվացումը պայմանավորված է նոր պայմաններում հին պետական մեքենայի գործունեության անհամապատասխանությամբ: Ռիստի, հակակոռուպցիոն ռազմավարությունը հիմնականում պետք է ուղղված լինի պետական մեքենայի արդիականացմանը: Անհրաժեշտ է կատարել այնպիսի համակարգային փոփոխություններ, որոնք կփոխեն և պետական ծառայողների, և քաղաքացիների վարվելակերպի, արժեքների ստերեոտիպերը:

Հակակոռուպցիոն ռազմավարության հիմքերը:

Նկատի ունենալով, որ կոռուպցիան պետության և հասարակության բնդիանուր հիմնախնդիրների հետևանք է, ուստի նրա դեմ պայքարը չի կարող պարփակվել միայն հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակներում տարվող պայքարով, այլ այն պետք է ընդգրկի կառավարության կողմից իրականացվող բոլոր ուղղություններն ու միջոցառումները:

Պետական ապարատի կատարելագործումը և տնտեսությունում պետության դերի չափի որոշակիացումը կարող է նաև հիմք ստեղծել տնտեսության կառավարման կատարելագործման համար, որը կարող է մեծապես նպաստել կոռուպցիայի դեմ պայքարին:

Ֆինանսական ոլորտ:

1. Անցումն իրական և կատարվող բյուջեի կարող է վերացնել բյուջետային միջոցների դեֆիցիտը, որի ժամանակ անհրաժեշտություն կառաջանա սահմանափակելու սեփական հայեցողությամբ բյուջետային միջոցները տնօրինելու հնարավորությունը:
2. Հարկային օրենսդրության կատարելագործումը կարող է նվազեցնել ստվերի առկայությունը տնտեսությունում, սահմանափակել հարկային ծառայողների կողմից տնտեսվարողների գործունեության անօրինական միջամտությունները:
3. Կանխիկ միջոցների շրջանառության, ժամանակակից էլեկտրոնային հաշվանցման և հաշվետվության համակարգերի ներդրումը կարող է ուժեղացնել ֆինանսական միջոցների նկատմամբ հսկողությունը, դժվարացնել կանխիկ ձևով կաշառք տայր, որը շատ կարևոր է հատկապես ներքևների կառուպցիայի սահմանափակման համար:

Սոցիալական ոլորտ:

1. Սոցիալական, այդ թվում կոմունալ, ծառայությունների մի մասի մասնավորեցումը, այդ ոլորտում դեֆիցիտ ծառայությունների ազատ մրցակցությունը, կնպաստի սոցիալական ծառայությունների նորմալ շուկայի ձևավորմանը:

2. Անկախիկ շրջանառության էլեկտրոնային միջոցների օգնությամբ վճարումների համակարգը կնվազեցնի քաղաքացիների կախվածությունը չինովնիկների հայեզողությունից, դրանով սահմանափակելով ներքևների կոռուպցիան:

3.Սոցիալական խնդիրների մի մասի պատվիրակումը քաղաքացիական հասարակության ինստիտուտներին՝ ներքևների կոռուպցիայի հակազդեցության արդյունավետ միջոցներից է: Մրցույթով և պայմանագրի հիման վրա պետական առանձին գործառույթներ իրականացնող հասարակական կազմակերպությունները՝ քաղաքացիական հասարակության ինստիտուտների անմիջական հսկողությամբ, ավելի քիչ են ենթակա բյուրակրատականացման: Դրանով միանգամից լուծվում են երեք խնդիր.

ա) ներքևների կոռուպցիայի սահմանափակում.

բ)պետության սոցիալական գործառույթների իրականացման արդյունավետության բարձրացում.

գ) իշխանության հանդեպ հասարակության վստահության բարձրացում:

Դատական համակարգի ամրապնդում:

Դատական համակարգի ամրապնդումը հակակոռուպցիոն ռազմավարության կարևորագույն խնդիրներից է: Ուստի անհրաժեշտ է.

1. Ստեղծել դատավորի և ամբողջ դատական համակարգի ապահովվածության գործուն երաշխիքներ:

2.Կատարելագործել կադրերի պատրաստման և ընտրության համակարգերը:

3.Ստեղծել վարչական դատարաններ:

Տեղական ինքնակառավարման ամրապնդում:

Տեղական ինքնակառավարման մարմիններում հակակոռուպցիոն պայքարի գլխավոր խոչընդոտը քաղաքացիական հասարակության կողմից վերահսկողության բազակայությունն է: Տեղական ինքնակառավարման նկատմամբ վերահսկողության ուժեղացումը հնարավորություն կտա տեղական նշանակության ունեցող բոլոր խնդիրները լուծել ինքնուրույն, առանց պետության միջամտության:

Անկախ հսկողական կառուցվածքների ստեղծում և ամրապնդում:

Իշխանությունների տարանջատման սկզբունքը ենթադրում է իշխանության թևերի միջև հակակշիռների և զսպիչների մեխանիզմների առկայություն: ԳՅ Ազգային ժողովը որպես օրենսդիր իշխանություն, գործադիր իշխանության նկատմամբ հսկողությունն իրականացնում է կառավարությանը վստահություն հայտնելու միջոցով: Միաժամանակ, վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման, վարկերի օգտագործման նակատմամբ: Ազգային ժողովը պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը քննարկում է Ազգային ժողովի վերահսկիչ պալատի եզրակացության առկայությամբ: Ազգային ժողովի վերահսկիչ պալատը փաստորեն միակ ստուգող մարմինն է, որը կախված չէ գործադիր մարմնից: Սակայն վերահսկիչ պալատի հնարավորությունները լիովին չեն օգտագործվում, քանի որ դեռևս չի հստակեցված այդ մարմնի գործառույթները, ինչպես լիազորությունների, այնպես էլ նրա կողմից կատարված ստուգումների արդյունքների հիման վրա պատասխանատվության մեխանիզմների առումով: Նպատակահարմար է ԳՅ Սահմանադրությունում կատարված փոփոխությունների հիման վրա ընդլայնել վերահսկիչ պալատի լիազորությունները, մասնավորապես, պետական գնումների, պետական պատվերների նկատմամբ, ապահովելով դրանց անցկացման թափանցիկությունն ու հրապարակայնությունը

Գործադիր իշխանության բարեփոխումներ:

1.Իշխանության նկատմամբ հասարակական հսկողության ապահովման նպատակով անհրաժեշտ է հասարակությանը տեղեկացնել գործադիր իշխանության գործունեության և ընդունած որոշումների մասին: Կարևորվում է ոչ միայն օրենսդրորեն ամրագրված քաղաքացու կողմից զանկացած տեղեկատվություն ստանալու իրավունքն, այլ նաև այդ իրավունքը խախտելու դեպքում համապատասխան պատասխանատվության սահմանումն ու խստորեն իրականացումը:

2. Անհրաժեշտ է հստակ տարանջատել որոշումներ ընդունող, դրանք կատարող և կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինները: Այսօր այդ գործառույթները հաճախ կրկնվում են, որը ոչ միայն նվազեցնում է կառավարման արդյունավետությունը, այլ նաև նպաստում է կոռուպցիայի աճին:

3. Կարևորվում է պաշտոնատար անձանց անհատական պատասխանատվության սահմանումը: Կառավարությունը կոլեգիալ կարգով որոշումներ կայացնելով, պետք է դրանց կատարման համար սահմանի անհատական պատասխանատվություն, քանի որ կոլեկտիվ պատասխանատվությունը կոռուպցիային նպաստող լավագույն միջոց է:

4. Կոռուպցիայի դեմ պայքարն առանց պետական զնումների և պատվերների բաց մրցույթների անցկացման չի կարող արդյունավետ լինել: Այնտեղ, որտեղ հնաևավոր չէ անցկացնել բաց մրցույթներ պետք է սահմանվեն խիստ չափորոշիչներ: Կարևոր է նաև, որ այդ զնումները կատարվեն շուկայական զներին համապատասխան:

5. Մրցակցության ձևավորումը և մոնոպոլիայի վերացումը պետության մատուցվող ծառայությունների ոլորտում կարող է կրճատել կոռուպցիան: Կոռուպցիոն ծառայությունների շուկան ձևավորվում է թափանցիկության դեֆիցիտի և ազատ մրցակցության սահմանափակման պայմաններում, ուստի պետք է պետությանը մատուցվող ծառայությունների մասին տեղեկատվությունն ու դրանց մասնակցությունը մատչելի դարձնել բոլորին:

Պետական ծառայության բարեփոխումներ:

1. Կոռուպցիայի դեմ պայքարում կարևորվում է պետական ծառայողների սոցիալական վիճակի էական փոփոխությունն հարցը: Ուստի պետական ծառայողների աշխատավարձը պետք է բարձրացնել անկախ երկրի տնտեսական վիճակից:

2. Կամայական նշանակումները կրճատելու նպատակով անհրաժեշտ է ներդնել պետական ծառայության միասնական համակարգ:

3. Պետական ծառայողի վարքագծի կանոնների ընդունմամբ և դրանց արդյունավետ կիրառմամբ կարելի է էականորեն նվազեցնել կոռուպցիայի հնարավորությունները:

4. Կարևորվում է նաև պետական ծառայողների լիազորությունների հստակ տարանջատման խնդիրը, որի համար պետք է ապահովվեն հետևյալ սկզբունքները.

ա) պետական ծառայողների իրավունքների տարանջատում և դրանց պաշտպանություն.

բ) անձնական հայեցողությամբ գործելու հնարավորության սահմանափակում.

գ) պետական ծառայողների և քաղաքացիների հարաբերությունների հստակ կանոնակարգում, այդ հարաբերություններում քաղաքացիների իրավունքների և պարտականությունների լուսաբանում.

դ) օրենքի կոպիտ խախտման որոշ դեպքերում` պետական ծառայողի նկատմամբ քրեական պատասխանատվության սահմանում.

ե) պետական ծառայողների նկատմամբ հսկողության խստացում և օրենքի պահանջներից խուսափելու համար պատասխանատվության հստակ մեխանիզմների սահմանում.

զ) պետական ծառայության հեղինակության բարձրացում:

Քաղաքացիական հասարակության ինստիտուտների աջակցություն:

Կոռուպցիային «հաղթել» հնարավոր է միայն քաղաքացիական հասարակության հետ համագործակցության դեպքում: Դա հատկապես անհրաժեշտ է իշխանությունների հասարակությունից օտարվելու դեպքում: Առանց հասարակության մասնակցության անհանար է հաղթահարել հատկապես ներքևների կոռուպցիան: Ուստի, կարևորվում է քաղաքացիական հասարակության ինստիտուտների միջոցով հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման նկատմամբ մոնիտորինգի (մշտադիտարկման) անցկացումը:

4. Կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական ուղղությունները

Կոռուպցիայի հասարակական վտանգավորությունը չափազանց մեծ է: Նկատի ունենալով, որ կոռուպցիան սպառնում է ներխուժել կյանքի գրեթե բոլոր ոլորտները, դրանով իսկ վտանգելով պետական մարմինների բնականոն գործունեությունը և պետության հեղինակությունը, դրա դեմ պայքարում պետք է համախմբվեն իշխանությունները, ոչ պետական հատվածը և քաղաքացիական հասարակությունը:

Կոռուպցիայի դեմ պայքարն իր մեջ ներառում է երեք հիմնական ուղղություն.

1. Հասարակության կողմից կոռուպցիայի և դրա հետևանքների հասարակական վտանգավորության աստիճանի գիտակցման արմատավորում.

2. Կոռուպցիայի կանխարգելում.

3. Օրենքի գերակայության ապահովում՝ ուղղված անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը:

Առաջին ուղղությունում կարևորվում են հակակոռուպցիոն ռազմավարության մշակման, հանրության կրթության, հակակոռուպցիոն պայքարում քաղաքացիական ինստիտուտների համախմբման, տեղեկատվության մատչելիության և անկախ ՁԼՍ-ների դերը.

երկրորդում՝ իշխանությունների քաղաքական կամքի, իշխանությունների գործունեության թափանցկության ապահովման, պետական կառավարման համակարգի կատարելագործման, պետական կառավարմանը հասարակության մասնակցության, հասարակական գործընթացներին պետության միջամտության նվազեցման, պետական պաշտոնյաների կողմից վարքագծի կանոնների պահպանման դերը.

երրորդում՝ ուժեղ ու անկախ դատական իշխանության, օրենսդրական դաշտի հստակեցման և կարգավորման, օրինագծերի մշակման ընթացքում հասարակական փորձաքննության իրականացման, օրենքների պարտադիր կատարման ապահովման, անձանց իրավունքների պաշտպանության և մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի դերը:

4.1. Հասարակության կողմից կոռուպցիայի և դրա հետևանքների հասարակական վտանգավորության աստիճանի գիտակցման արմատավորում

Հասարակության կողմից կոռուպցիայի և դրա հետևանքների հասարակական վտանգավորության աստիճանի գիտակցման համար նախ և առաջ անհրաժեշտ է ունենալ հակակոռուպցիոն ռազմավարություն: Հասարակությունը պետք է կարողանա համախմբել իր ուժերը կոռուպցիայի դեմ պայքարում: Հակակոռուպցիոն ռազմավարության գաղափարները հասարակության լայն շերտերին հասցնելու համար խիստ կարևոր է զանգվածային լրատվության միջոցների դերը: Հակակոռուպցիոն ռազմավարություն իրականացնելու համար քաղաքացիական հասարակության ինստիտուտները և զանգվածային լրատվամիջոցները

պետք է զբաղվեն հանրության հակակոռուպցիոն կրթությամբ: Որպես առավել արդյունավետ ներգործության միջոց, հարկավոր է հեռուստատեսությամբ և ռադիոյով կազմակերպել քննարկումներ՝ պետական ծառայողների, քաղաքական ընդդիմության, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների մասնակցությամբ, որոնց ընթացքում կոռուպցիայի դրսևորման կոնկրետ դեպքի հիման վրա կքննարկվեն տվյալ բնագավառի համակարգային թերությունները, խնդիրների լուծման մեխանիզմները:

Կոռուպցիայի դեմ պայքարում անգնահատելի է քաղաքացիական հասարակության դերը: Հայաստանում քաղաքացիական հասարակությունը դեռևս ձևավորման փուլում է: Սակայն զարգացման անգամ այս փուլում քաղաքացիական հասարակությունն ի զորու է ակտիվորեն մասնակցել կոռուպցիայի դեմ պայքարին: Այս բնագավառում իշխանության առաջնահերթ խնդիրներից է հասարակության մեջ կոռուպցիայի հանդեպ անհանդուրժողական վերաբերմունքի դաստիարակումն ու հասարակությանը համապատասխան, թեկուզ տարրական, գիտելիքներով զինումը:

Ժողովրդավարական ավանդույթները ենթադրում են քաղաքացիական հասարակության կողմից պետության կառավարմանը մասնակցելու անհրաժեշտությունը: Բացի սահմանադրական՝ ընտրելու և ընտրվելու, հանրաքվեների միջոցով պետության համար կարևորագույն խնդիրների լուծմանը մասնակցելու իրավունքները իրացնելուց, քաղաքացիական հասարակությունն իր միավորումների միջոցով կարող է անմիջական մասնակցություն ունենալ ինչպես պետության քաղաքականության, այնպես էլ օրենսդրական և ենթօրենսդրական ակտերի մշակմանը՝ համաժողովների, քննարկումների, խորհրդակցությունների և խորհրդարանական լսումների ու կազմակերպված լրբբինգի միջոցով: Պետական կարևոր խնդիրների լուծմանը քաղաքացիական հասարակության մասնակցության լավագույն ձևը խորհրդարանական լսումներն են, երբ մինչև օրենքի ընդունումը հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպվում են օրինագծերի քննարկումներ: Այս առումով կարևորվում է «Լոբբինգի մասին» օրենքի ընդունումը: Չնայած լոբբինգի կազմակերպումը բնորոշ է զարգացած քաղաքացիական հասարակությանը: սակայն այդ օրենքի ընդունումը կսահմանափակի պետական սպարատի կոռուպցիայի զրկությունը, քանի որ համապատասխան օրենքի շրջանակներում օրինական ծանապարհով կներկայացվի առանձին խմբերի շահերն օրենսդիր և գործադիր մարմիններում:

Հակակոռուպցիոն պայքարին քաղաքացիական հասարակությունը պետք է մասնակցի հատկապես կոռուպցիայի դեմ քարոզչություն իրականացնելու միջոցով, որտեղ կարևորվում է զանգվածային լրատվամիջոցների դերը՝ հասարակությանն անաչառ և արդարացի, կոռուպցիայի դրսևորումների մասին օբյեկտիվ տեղեկատվություն տալու առումով: Այդ խնդրի իրականացման համար կարևոր է «Ձանգվածային լրատվամիջոցների մասին» ընդունված օրենքի դերն ու լրագրողի վարքագծի կանոնների ընդունումը, որով պետք է հստակեցվեն ինչպես լրագրողի իրավունքները, այնպես էլ պարտականությունները և չստուգված, ոչ հավաստի տեղեկատվություն ներկայացնելու հետևանքները:

Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման հաջողությունը պայմանավորված է դրա նկատմամբ քաղաքացիական հասարակության (կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, արհեստակցական միությունների) կողմից մոնիտորինգի անցկացման կարողությամբ: Հակակոռուպցիոն ռազմավարության նկատմամբ մոնիտորինգ իրականացնելու համար անհրաժեշտ են մի շարք նախապայմաններ, մասնավորապես.

- մոնիտորինգ անցկացնողների մասնագիտական բարձր պատրաստվածություն և անհատական բարոյահոգեբանական հատկանիշներ,
- ճշգրիտ գնահատման համար անհրաժեշտ ցուցանիշների համակարգի ստեղծում,
- մոնիտորինգի խմբի անդամների համար հատուկ վերապատրաստման ծրագրերի մշակում և դասընթացների կազմակերպում:

4.2. Կոռուպցիայի կանխարգելում

Կոռուպցիոն կանխարգելիչ միջոցառումներում կարևորվում է պետական կառավարման համակարգի հետագա կատարելագործումը: Կանխարգելման գործում մեծ դեր են վերապահվում օրենքների անվերապահ կատարմանն ուղղված մեխանիզմներին:

Հանրային իրազեկությունը, իրավագիտակցության մակարդակի բարձրացումը կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելման կարևորագույն տարրերից են, որոնք կնպաստեն պետության նկատմամբ հասարակության վստահության հետագա աճին: Կառավարման մարմինների գործառույթների և չափերի օպտիմալացման, ինչպես նաև պրոֆեսիոնալ ծառայության ներդրմանը զուգահեռ տեղեկատվության ստացումը զգալիորեն կբարձրացնի հանրային ծառայությունների մատչելիությունը, կօգնի ընդլայնել քաղաքացիների մասնակցությունը քաղաքական որոշումների կայացման գործընթացին:

Այս նպատակով անհրաժեշտ է.

- Ուժեղացնել և վերաիմաստավորել նախարարությունների, գերատեսչությունների և առանձին ծառայությունների աշխատակազմերի հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումների գործունեությունը, հատկապես այն նախարարություններում, որոնք ներգրավված են հանրային ծառայությունների մատուցման ոլորտում, ինչպիսիք են կրթությունը, սոցիալական ապահովությունը, առողջապահությունը, էներգետիկան, ոստիկանությունը և այլն:
- Ձևավորել միջնախարարական տեղեկատվական ցանց, որը կիրազեկի բոլոր հանրային ծառայություններ մատուցող նախարարություններին և այլ մարմիններին միմյանց գործառույթների ու այն հարցերի շրջանակի մասին, որով այդ

մարմիններից յուրաքանչյուրն զբաղվում է: Սա կօգնի խուսափել բյուրոկրատական քաշքշուկներից:

- Ընդունել «Տեղեկատվության ազատության մասին» օրենքից բխող ենթաօրենսդրական ակտեր և սահմանել ընթացակարգեր ու կանոններ՝ տեղեկատվության ստացման վերաբերյալ:
- Բարելավել պետական պաշտոնյաների և քաղաքացիների փոխհարաբերությունների կանոնները, ինչպես նաև տեղեկատվություն ստանալու ընթացակարգերը, որոնք պետք է սահմանեն այն կոնկրետ միջոցառումները, որոնք կձեռնարկվեն, եթե դիմողը ժամանակին չստանա սպառիչ պատասխան: Նախնական փուլում դա կիրականացվի հանրային ծառայության ոլորտներից մի քանիսում որպես փորձնական ծրագիր:
- Լուսաբանել քաղաքացիների բողոքարկման իրավունքները և վերանայել պետական ծառայողների կողմից քաղաքացիների դիմումներին ընթացք տալու մասին օրենսդրությունը՝ կրճատելով քաղաքացիների դիմում-բողոքներին պատասխանելու համար նախատեսված մեկամսյա ժամկետը:

Նշված միջոցառումների շարքում կարևորվում է նաև պետական մարմինների կողմից իրենց գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունների հրապարակումները, ինտերնետային էջերի ստեղծումը և տեղեկատվության էլեկտրոնային բաց համակարգերի կիրառումը:

4.3. Օրենքի գերակայության ապահովումը՝ ուղղված անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը

Օրենքների գերակայության ապահովման և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության գործում առաջնահերթ խնդիրներից է օրենսդրական դաշտի կարգավորումը, օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի միջև եղած հակասությունների, դրանցում կոռուպցիային նպաստող սողանքների վերացումը: Կոռուպցիայի դեմ պայքարում կարևոր նշանակություն ունի օրենքի իշխանության, ինչպես նաև օրենքի առաջ բոլորի հավասարության սկզբունքի անխաթար կատարման ապահովումը: Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը և Եվրոպայի խորհրդին անդամակցությունը ենթադրում է ներպետական օրենսդրության համապատասխանեցում միջազգային չափանիշներին:

Օրենքների մշակման փուլում կարևորվում են տնտեսական, սոցիալական, կառավարման ոլորտներում ընդունվող օրենքների, քաղաքականությունն ուղղորդող հայեցակարգերի և այլ իրավական ակտերի նախագծերի նպատակային հակակոռուպցիոն փորձաքննությունը, քաղաքացիական հասարակության ինստիտուտների մասնակցության ապահովումը՝

- հանրային քննարկումների, խորհրդարանական լսումների, սեմինարների, կոնֆերանսների օգնությամբ, Ազգային ժողովի և կառավարության ինտերնետային էջերում
- ՁԼՄ-ների միջոցով օրենքների, ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մասին հրապարակումները:

Օրենքների կենսագործման առավել կարևոր փուլերից է դրանց կիրառումը, քանի որ իրական ժողովրդավարությունը ենթադրում է ոչ միայն օրենքների առկայություն, այլ նաև դրանց կիրառում: Իրավական ակտերի կիրառումն ապահովելու համար անհրաժեշտ է տեղեկատվության միջոցներով, այդ թվում՝ էլեկտրոնային, հասարակությանն իրազեկել ընդունված իրավական ակտերի մասին: Այս գործընթացում կարևոր է նաև օրենսդրական ակտերի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը, որա համար համապատասխան գործուն մեխանիզմների մշակումը և ներդրումը:

5. Տեղեկատվության ազատություն և մատչելիություն

Ներկայումս ազատ հասարակության կառուցումն ընդհարվում է նոր մարտահրավերների: Այդ մարտահրավերներից ամենավտանգավորը կոռուպցիան է: Ազատ, առանց կոռուպցիայի հասարակության կառուցման գլխավոր տարրերից է տեղեկատվության երաշխավորված մատչելիությունը, խոսքի ազատությունը: Որքան մատչելի է տեղեկատվությունը, որքան մեծ է նրա ճշմարտագիտությունը, այնքան ավելի մեծ հնարավորություն է ստեղծվում արդյունավետ կառավարման և նրա թափանցիկության համար: Առանց տեղեկատվության մատչելիության և ազատության՝ պետական ինստիտուտների նկատմամբ վստահությունը կորցվի կասկածի տակ: ԵՎրոպայի խորհուրդն անդամ պետություններին առաջարկում է.

«Անդամ պետությունները, խնդրանքի հիման վրա, պետք է երաշխավորեն յուրաքանչյուր մարդու մուտքը դեպի պետական իշխանությունների տրամադրության տակ գտնվող պաշտոնական փաստաթղթերը: Այս սկզբունքը պետք է կիրառվի առանց զանկազած պատճառաբանությամբ»:

Տեղեկատվության ազատության և մատչելիության գլխավոր պայմանը թափանցիկությունն է: Պետական մարմինների պետք է մշակեն այնպիսի քաղաքականություն, որը նախատեսում է կարևոր տեղեկատվության մատուցում ոչ թե քաղաքացու պահանջով, այլ տեղեկատվության տրամադրում հաղորդագրությունների միջոցով: Գլխավորն այստեղ մատուցված տեղեկատվության ամբողջականությունը, մատչելիությունն ու ճշմարտագիտությունն է:

Հաջորդ պայմանը՝ հաշվետվությունն է: Որքան տեղեկատվությունն ազատորեն է տարածվում, այնքան ավելի մեծ հնարավորություն է ստեղծվում կառավարության գործունեության թափանցիկության, իսկապես ենթահաշվետու կառավարման մարմիններ ունենալու համար: Տեղեկատվության մատչելիության համար պայքարը նախատեսում է պետական մարմինների հաշվետվությունների նոր համակարգի ներդրում: Հաշվետվությունների համակարգված և ամբողջական տրամադրումը հանրության՝ կարող է դառնալ կոռուպցիայի դեմ պայքարի լավագույն միջոց: Նախարարությունների, գերատեսչությունների տարեկան հաշվետվությունները պետք է դառնան հանրության սեփականությունը, միայն այդ ձևով հանրությունը կարող է վերահսկողություն իրականացնել պետական մարմինների գործունեության նկատմամբ: Նրանց ում հասարակությունը վստահել և օժտել է իշխանությանը քաղաքացիական հասարակության ինստիտուտների միջոցով պետք է ուկնդիր լինեն ժողովրդի ձայնին: Իշխանությունը պետք է ընդունի հասարակության քննադատությունը: Պետական պաշտոնյաները պետք է մատչելի լինեն և քաղաքացիների և զանգվածային լրատվամիջոցների համար: Հասարակության ուշադրության կենտրոնում գտնվող պետական պաշտոնյան ստիպված է գործել միմիայն հօգուտ հասարակության

շահերի: Արդյունավետ կառավարման համակարգ ունենալու համար պետական մարմինների գործունեությունը պետք է լինի առավել բազ, թափանցիկ և հենվի իրական արժեքների վրա:

2003թ. ընդունված Հայաստանի Հանրապետության «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը երաշխավորում է յուրաքանչյուր անձի կողմից իր փնտրած տեղեկատվությունն ստանալու սահմանադրական իրավունքը: Պետք է առաջնորդվել այն սկզբունքով, որ ողջ տեղեկատվությունը պատկանում է հասարակությանը և տեղեկատվության տրամադրման սահմանափակումը կարող է կատարվել այն դեպքում, երբ այն վերաբերում է ազգային անվտանգության խնդիրներին կամ անձանց անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությանը: Ազգային անվտանգության խնդիրը խիստ շահարկելի է, ուստի տեղեկատվական ազատության սահմանափակումները պետք է կատարվեն բացառապես միայն համապատասխան օրենքով:

Տեղեկատվության ազատության և մատչելիության հարցում կարևորելով գանգվածային լրատվամիջոցների դերը, սակայն չպետք է մոռանալ քառասյին, անմշակ և ոչ հավաստի տեղեկատվության վտանգի մասին: Ինչպիսի դիրքորոշում էլ ունենա լրագրողը նրա վարքագիծը պետք է ունենա մի գլխավոր պայման՝ ներկայացվող տեղեկատվությունը պետք է լինի անբողջական ու հավաստի:

Տեղեկատվության ազատությունն ու մատչելիությունը ենթադրում են հետևյալ սկզբունքների կիրառում.

1.Հասարակական հետաքրքրությունը ներկայացնող գանկագած տեղեկատվության մատչելիությունը յուրաքանչյուր քաղաքացու սահմանադրական իրավունքն է:

2.Պետական մարմինները պարտավոր են իրենց գործունեության մասին պարբերաբար տեղեկատվություն մատուցել հանրությանը:

3.Պետությունը և գանգվածային լրատվամիջոցները պարտավոր են հանրությանը մատուցել հավաստի, ճշմարտագի տեղեկատվություն:

Գլուխ II. Տնտեսական ոլորտի հիմնախնդիրներ

Կոռուպցիայի դեմ պայքարում կարևոր նշանակություն ունի տնտեսության մեջ պետությանը՝ կարգավորիչ դերի վերապահումը: Կոռուպցիայի դեմ պայքարի տեսանկյունից անչափ կարևոր է արդյունավետ տնտեսական համակարգի ձևավորումը:

Արդյունավետ տնտեսական համակարգի ձևավորման գլխավոր երաշխիքը սեփականության պաշտպանությունն է: Պետությունը պետք է կարողանա երաշխավորել սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացումը և հավասար իրավական պաշտպանությունը, տնտեսական գործունեության ազատությունը, ազատ տնտեսական մրցակցությունը: Կոռուպցիայի դեմ պայքարում տնտեսական բարեփոխումները պետք է նպատակաուղղված լինեն տնտեսվարողների համար հավասար մրցակցային դաշտի ձևավորմանն ու ստվերային տնտեսության բացառապես ու կրճատմանը: Ստվերի առկայությունը հանգեցնում է պետության տնտեսական ներուժի թուլացմանը:

Կոռուպցիայի հաղթահարման և ստվերային տնտեսության կրճատման համար անհրաժեշտ է գործող համակարգի շրջանակներում հստակեցնել և ուժեղացնել անօրինական գործարքների միջոցով զույք և եկամուտներ ձեռք բերելու դեմ պայքարի մեխանիզմները, սահմանափակել ֆինանսական կանխիկ գործարքները:

Տնտեսության մեջ մրցակցային անհավասար դաշտի գոյությունը խոչընդոտում է կապիտալի ազատ շարժը: Կոռուպցիան, խթանելով անբարեխիղճ մրցակցությունը, խոչընդոտում է ոչ միայն օտարերկրյա, այլ նաև տեղական ներդրումները: Մրցակցային հավասար դաշտի ձևավորման նպատակով մրցակցության պետական քաղաքականության բնագավառում անհրաժեշտ է կանոնակարգել բնական մենաշնորհների գործունեությունը:

2000 թվականին «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո դեռևս ամբողջովին գործարկված չեն օրենքի՝ իրենց բնույթով խիստ ընթացակարգային նորմերը և այդ կարճ ժամանակահատվածում դեռևս այդ ոլորտում շոշափելի արդյունքներ չեն արձանագրվել:

Մրցակցության հավասար պայմաններով միջավայրի ձևավորման նպատակով մրցակցության պետական քաղաքականության ոլորտում անհրաժեշտ է՝

- հստակեցնել տնտեսական մրցակացության պաշտպանության հանձնաժողովի իրավասությունները՝ ոլորտի կարգավորմանն առնչվող նորմատիվ և անհատական իրավական ակտերի ընդունման գործում,
- կոնկրետացնել հանձնաժողովի կողմից պատասխանատվության ենթարկելու մեխանիզմները,
- ընդլայնել հանձնաժողովի կողմից տեղեկությունների հավաքագրման իրավասությունները:
- հստակեցնել սպառողների իրավունքների և շահերի պաշտպանության ուղղությամբ հանձնաժողովի գործառույթները, հատկապես սպառողական ապրանքների շուկայի կարգավորման հարցում:

Սպառողների շահերի պաշտպանության ոլորտում զգալի են սպառողական ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման օրենսդրական և նորմատիվ պահանջների խախտումները: Անհրաժեշտ է բազառել առանց համապատասխան սերտիֆիկատների ՀՀ ներքին շուկա պարտադիր սերտիֆիկացման ենթակա ապրանքների ներկրման հնարավորությունը: Անհրաժեշտ է ապահովել այս ոլորտի պետական վերահսկողության մարմինների գործունեության թափանցիկությունը՝ հասարակական մոնիտորինգ իրականացնելու միջոցով:

Տնտեսական ոլորտում կոռուպցիոն հարաբերությունները կանխելու նպատակով անհրաժեշտ է աջակցել ճյուղային մասնագիտական միությունների կայացմանն ու զարգացմանը: Կազմակերպություններում կրկնակի «սև» հաշվապահական հաշվառման ու հաշվետվությունների կանխման, ֆինանսական վիճակի վերաբերյալ արժանահավատ և թափանցիկ տեղեկատվության ստացման նպատակով պետք է նպաստել աուդիտի ինստիտուտի կայացմանը:

Ֆինանսական վերահսկողություն իրականացնող պետական մարմինների միջև արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով կարևորվում է ներկառավարական (միջգերատեսչական) զանցի ներդրումը:

Կեղծ և կանխամտածված սնանկության կանխարգելման նպատակով կարևորվում է «Սնանկության մասին» ՀՀ նոր օրենքի ընդունումը, որով կպարզեցվեն սնանկության վարույթները, կամրագրվեն սնանկության արագացված ընթացակարգեր: Միաժամանակ, հստակ կսահմանվեն կառավարչի, դատավորի, պարտատերերի ու պարտապանի իրավունքները և գույքային պատասխանատվության մեխանիզմները: Այս առումով, համապատասխան նորմեր արդեն իսկ ամրագրվել են ՀՀ նոր քրեական օրենսգրքում: Պարտապանի շահերի պաշտպանության տեսանկյունից պետք է սահմանել նրա կողմից սեփական անվճարունակությունը ծանաչելու նպատակով դատարան դիմելու պարտականությունը: Սնանկության վարույթների նկատմամբ վերահսկողությունը լիարժեք իրականացնելու համար էական նշանակություն ունի պարտատերերի ժողովի իրավունքների ամբողջական ամրագրումը: Սնանկության վարույթների իրականացման ընթացքում չարաշահումները կանխելու նպատակով կարևոր է գույքի կառավարման և օտարման վերահսկելի գործընթացների ներդրումը:

Անհրաժեշտ է ապահովել արդեն իսկ ներդրված ձեռնարկատիրական գործունեության համար կազմակերպություն ստեղծելու և գրանցելու պարզեցված համակարգի («միասնական մեկ պատուհանից» սկզբունք՝ պետական գրանցում, ֆիրմային անվանման գրանցում, հարկային կոդի շնորհում և այլն) հստակ կիրառումը: Այս բնագավառում կարևոր է նաև գրանցման վարույթների սահմանված ժամկետների կրճատման համար պետական ռեգիստրի ամբողջ համակարգում ձևավորված միասնական տեղեկատվական ցանցի ստեղծումը, որը կբարձրացնի համակարգի նկատմամբ ընդհանուր վերահսկողություն իրականացնելու հնարավորությունը ու կատարելագործումը:

Կարևորվում է նաև լիցենզավորման, արտոնագրման համակարգերի ամբողջական ձևավորումը: Այս ուղղությամբ առաջնահերթ է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի կիրարկման ապահովումը՝ լիցենզավորման գործընթացը թափանցիկ դարձնելը, դրանում հնարավորինս քիչ գործունեության տեսակներ ընդգրկելը, պետական պաշտոնյաների գործողությունների ազատությունը նվազագույնի հասցնելը, վերահսկողության հետադարձ տեղեկատվության ապահովման համար ինստիտուցիոնալ միջոցառումների մշակումը:

Պետական ֆինանսներ, բյուջետային գործընթաց, գույք և մասնավորեցման հիմնախնդիրներ

Պետական գնումների եւ բյուջետային ծախսերի իրականացման գործում կարևորվում է վերահսկողության և հաշվետվության թափանցիկ համակարգերի ձևավորումը:

Թեև վերջին տարիներին բյուջեի կատարման հետ կապված խնդիրներ չկան, բայց բյուջետային գործընթացում ևս առկա են կոռուպցիոն ռիսկեր: Ուստի բյուջետային գործընթացում կարևորվում է պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունների արժանահավատությունը և նրանց իարականացման նկատմամբ վերահսկողության իրականացումը: Բյուջետային կատարման մասին հաշվետվության, նրա նկատմամբ վերահսկողության թույլ համակարգերի առկայությունը կարող են նպաստել կոռուպցիոն երևույթների արմատավորմանը: Ուստի կարևորվում է.

- Բոլոր մակարդակների բյուջեների հրապարակայնության և թափանցիկության սկզբունքների պահպանումը: Հանրապետական և տեղական բյուջեների միջև կատարվող բյուջետային հոսքերի թափանցիկության ապահովումը: Պետական բյուջեի կատարման թափանցիկությունն ապահովելու նպատակով բյուջեից սնվող կազմակերպությունների եկամուտների ու ծախսերի մասին հաշվետվությունների հրապարակումները (գորույկների, ինտերնետային տեղեկատվության և այլ տեսքով) հնարավորություն կտան հարկատուներին տեղյակ լինել ու վերահսկել իրենց մուծած հարկերից գոյացած գումարների օգտագործման գործընթացները:
- Բյուջեի կատարումն ապահովող հաշվետվությունների հստակ համակարգի ձևավորումը:
- Բյուջեի իրականացման նկատմամբ խիստ վերահսկողության սահմանումը:

Բյուջեի կատարման ընթացքում հնարավոր չարաշահումները կանխելու նպատակով անհրաժեշտ է, որ Ազգային ժողովի վերահսկիչ պալատը բյուջեի կատարման կիսամյակային և տարեկան եզրակացություններում առանձին բազմաժրջվ անդրադառնա իրականացված հաշվանցումների օրինականության խնդրին:

Կարևոր է նաև ներդնել համայնքների բյուջեների կատարման ընթացքի վերաբերյալ ամբողջական տեղեկատվական համակարգ, որն անհրաժեշտ է դրանց դոտացիաների և սուբսիդիաների առավել արդյունավետ օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար:

Բյուջետային միջոցներից զգալի սնուցում, այդ թվում դոտացիաներ ստացող ոլորտների (էներգետիկա, ջրային ռեսուրսների օգտագործում) ու առանձին կազմակերպությունների ֆինանսների կառավարման համակարգում պետք է ներդրվի ֆինանսական վերահսկիչ մարմինների կողմից դրամական հոսքերի մոնիտորինգի մեխանիզմ:

Բյուջետային և պետական գնումների համակարգի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ներդնել համայնքային բյուջեների կատարման ընթացքի վերաբերյալ ամբողջական տեղեկատվական համակարգ, որը կնպաստի դոտացիաների և սուբսիդիաների առավել արդյունավետ իրականացմանը:

Բյուջետային կազմակերպություններում վարվող հաշվապահական հաշվառման համակարգն անհրաժեշտ է համապատասխանեցնել միջազգային պրակտիկայում ընդունված բյուջետային հաշվառման ստանդարտներին և նորմերին: Պետական ծախսերի կառավարման բնագավառում դրանք կսահմանվեն ըստ հեռանկարային ծրագրերի և ոլորտների, կմշակվեն պետական ծախսերի նորմատիվային բազաները և բյուջետային դասակարգման համակարգի փոփոխությունները: Ըստ էության, անհրաժեշտ կլինի ուժեղացնել վերահսկողությունը դրամական հոսքերի, բյուջետային միջոցների հատկացումների գործընթացի և բյուջետային հաստատությունների կողմից ծախսերի կատարման արդյունավետության նկատմամբ:

Պետական գնումների հրապարակայնությունն ու թափանցիկությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ընդլայնել գնումների պաշտոնական տեղեկագրում, ինչպես նաև գործակալության էլեկտրոնային էջում պետության և տեղական ինքնակառավարման մարմինների համար գնվող հիմնական սպառման ապրանքների, ծառայությունների ամվանագանկի, դրանց տեխնիկական հատկանիշները բնութագրող տվյալների, պայմանագրերի կնքման և հայտերի ներկայացման էլեկտրոնային տարբերակի, ինչպես նաև լիազոր մարմին բողոքարկման ներկայացված բոլոր դեպքերի ու դրանց արդյունքների գետեղումը: Շահերի բախումը բացառելու նպատակով անհրաժեշտ է ընդլայնել պետական գնումներով իրականացվող ապրանքների, (աշխատանքների, ծառայությունների)

անվանացանկը, գնումներին մասնակցելու իրավունք չունեցող անձանց թվում պետք է ընդգրկվել այն կազմակերպությունները, որոնք նախկինում մասնակցելով պետական գնումներին՝ չեն կատարել կամ թերի են կատարել ստանձնած պարտավորությունները: Պատվիրատուն վճարած գնի դիմաց պետք է ստանա լավագույն ապրանքը կամ ծառայությունը:

Կոռուպցիոն մեծ ռիսկեր է պարունակում նաև հողերի աճուրդների կազմակերպումը: Աճուրդների կազմակերպման ընթացքում կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելուն կարող են նպաստել դրանց անզկազման հրապարակայնությունն ու թափանցիկությունը:

Մասնավորեցման գործընթացը կարող է բերել կոռուպցիայի նվազում, չնայած սեփականաշնորհման բոլոր առավելություններին դրա հետ կապված կան որոշ վտանգներ: Գոյություն ունեցող պետական և մասնավոր հատվածները, կոռուպցիայի հնարավորություններ են ստեղծում հավասարապես երկու հատվածներում:

Մասնավորեցման գործընթացում հնարավոր չարաշահումներից խուսափելու, կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու, հրապարակայնությունն ու թափանցիկությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ներդնել մասնավորեցման մեխանիզմները՝ «մասնավորեցման խանութի» միջոցով, պետական գույքի մասնավորեցումը կամ օտարումը կազմակերպել հիմնականում աճուրդների և մրցույթների միջոցով, մասնավորեցման գործընթացում օրենսդրորեն սահմանված կարգով ներգրավել տվյալ ոլորտի մասնագիտական միություններին:

Հարկային համակարգ

Հարկային ոլորտում կոռուպցիայի կանխարգելման ու սահմանափակման նպատակով անհրաժեշտ է հրաժարվել օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնություններից, առավելագույնս պարզեցնել գործող հարկային համակարգը, վերանայել ոչ ռեզիդենտների, ինչպես նաև օտարերկրյա ներդրումներով կազմակերպությունների հարկման համակարգը, թեթևացնել հարկային բեռն անուղղակի հարկերի մասով, ուժեղացնել հարկային և մաքսային վարչարարությունը և հստակեցնել դրանց նկատմամբ հսկողության և վերահսկողության մեխանիզմները, մշակել և հրապարակել հարկատուների իրավունքն և պարտականությունների մասին մեթոդական ուղեցույցներ, հարկատուներին տրամադրել ամենամյա ամփոփ տեղեկատվություն իրենց կատարած հարկային պարտականությունների վերաբերյալ:

Խիստ կարևոր է ԱԱՀ-ի գծով հարկային գերավճարների վերադարձման հստակ և թափանցիկ մեխանիզմների մշակումը: Ընդ որում, նպատակահարմար է տարանջատել արտահանողների և երկրի ներսում իրացում կատարող սուբյեկտների ԱԱՀ-ի գերավճարների ընթացակարգերը: Առանձին կարևորություն ունի հարկային ծառայողների մասնագիտական պատրաստվածության, պատասխանատվության աստիճանի, սոցիալական պաշտպանվածության բարձրացումը, նրանց կողմից էթիկայի կանոնների պահպանումը: Անհրաժեշտ է նաև սոցիալական ապահովության քարտերի համակարգի ներդրման հիման վրա ընդլայնել գույքի եկամուտների հայտարարագրման ինստիտուտը, ընդհուպ մինչև քաղաքացիները, և այդ հիմքով ներդնել հարկային պարտավորությունների դիմաց վճարումների մեխանիզմ:

Չնայած հարկային համակարգում իրականացվող բարեփոխումներին, հարկային վարչարարությունը դեռևս կատարելագործման կարիք է զգում, ավտոմատացված կառավարման և վերահսկողության ամբողջական մեխանիզմները շարունակում են թույլ կիրառվել: Անմիջական ստուգումներն օգտագործվում են որպես հարկերից խուսափելու ղեպերի բազահայտման հիմնական միջոց, իսկ միջազգային չափանիշներով ընդունված վերլուծական, վիճակագրական կամ գնահատման այլ մեթոդները թերազնահատված են: Այս առումով անհրաժեշտ է հարկատուների առանձին խմբերի և անհատ հարկատուների համար համակարգչային ծրագրավորման միջոցով ձևավորել վերլուծական տվյալների համապատասխան բազաներ, որոնց հիման վրա հնարավոր կլինի բազահայտել հարկային պարտավորությունների հնարավոր շեղումները, հիմնավորել հարկատուների մոտ տեղում ստուգում իրականացնելու անհրաժեշտությունն ու ժամկետը:

Հարկային ոլորտում տեղեկատվության օպերատիվ փոխանակման, վերահսկողության և վարչարարության կատարելագործման նպատակով խիստ անհրաժեշտ է տեղեկատվական միասնական զանգի ստեղծումը:

Կարևորվում է Հարկային օրենսգրքի ընունման հարցը, որը հնարավորություն կտա մեկտեղելու հարկային ծառայության վերաբերյալ բոլոր խնդիրները:

Պաշտոնատար և ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին օրենսդրությամբ նախատեսվող սուբյեկտների շրջանակի ընդլայնումը կնպաստի ստվերային տնտեսության կրճատմանը և հարկման բազայի ավելացմանը: Պետական ծառայողների գույքի և եկամուտների նկատմամբ վերահսկողության արդյունավետ համակարգ ներդնելու համար կարևոր է կոռուպցիոն սողանքների բացահայտման և վերացման ուղղությամբ հանձնարարականների մշակումը: Գույքի, եկամուտների և պարտավորությունների հայտարարագրման պահանջների կատարումը ապահովելու համար կարևորվում է պետական ծառայողների պատասխանատվության և նրանց նկատմամբ պատժամիջոցների կիրառման մեխանիզմների համապատասխանեցումը միջազգային չափանիշներին:

Մաքսային համակարգ

Մաքսային համակարգը պետական եկամուտների ապահովման, ներքին շուկայի պաշտպանության, ապրանքաշրջանառության կարգավորման կարևորագույն օղակներից է:

Մաքսային համակարգում կոռուպցիայի գոյության պատճառով պետությունն ու հասարակությունը հսկայական կորուստներ են կրում՝ կոռուպցիան մի կողմից կրճատում է պետական եկամուտները, մյուս կողմից դանդաղեցնում՝ տնտեսական աճը: Համաշխարհային մաքսային կազմակերպությունը (ՀՄԿ) չափազանց կարևոր է համարում մաքսային օրենսդրության պարզեցումը, ընթացակարգերի ստանդարտացումը, թափանցիկությունը, հաճախորդների հետ մաքսային աշխատակիցներ անմիջական շփման նվազեցումը, որի համար ուղորդ կարգավորող ենթաօրենսդրական ակտերը պետք է համապատասխանեցնել միջազգային չափանիշներին՝ բացառելով կրկնակի ստանդարտները: Այդ առումով հատկապես խոցելի են ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի որոշման կանոնները և իրականացման մեխանիզմները:

Դեռևս զգալի է վարչարարական միջամտությունը մաքսային արժեքի հայտարարագրման ժամանակ: Առանձին կարևորություն ունի մաքսային ծառայողների մասնագիտական պատրաստվածության, պատասխանատվության աստիճանի, սոցիալական պաշտպանվածության բարձրացումը, ինչպես նաև քաղաքացիների իրազեկության ապահովումը և օրենքի անկատարությունից օգտվելու հնարավորությունը

Մաքսային ոլորտում կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների, ինչպես նաև դրանց վերաբերյալ մաքսային մարմիններին հետաքրքրող տեղեկատվություն պարունակող փաստաթղթերի հետբացթողունային հսկողություն, ՀՀ ներքին շուկայում ոչ հայկական արտադրության ապրանքների շրջանառության նկատմամբ վերահսկողության արդյունավետ մեխանիզմների ներդրում, պարզեցնել և հեշտացնել ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող ապրանքների մաքսային ձևակերպումների ընթացակարգը, բարելավել մաքսային հսկողության արդյունավետությանն ուղղված տեխնիկական և տեխնոլոգիական հազցեցվածությունը:

Կարևորվում է նաև միասնական տեղեկատվական գանգի ստեղծումը, որը հնարավորություն կտա խստացնելու մաքսային վարչարարությունը և մաքսային ապրանքների նկատմամբ վերահսկողությունը:

Մաքսային մարմինների աշխատանքի արդյունավետության բարձրացման համար կարևոր նշանակություն ունի ինչպես նրանց գործունեության մասին քաղաքացիներին ժամանակին և պատշաճ ձևով իրազեկելը, բողոքարկման արդյունավետ մեխանիզմների մշակումը, այնպես էլ բարձր մասնագիտական կարողություններով և բավարար լիազորություններով օժտված մաքսային միջնորդ (բրոքերային) կազմակերպությունների գործունեությունը:

Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարի ուղղությունները

Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարը հակակոռուպցիոն ռազմավարության գլխավոր գործիքներից է: 2004թ. դեկտեմբերի 14-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի ընդունումը ենթադրում է դրական տեղաշարժեր փողերի լվացմանը հակազդելու գործում: Սակայն միայն այդ օրենքի ընունումը դեռևս բավարար չէ ապահովելու փողերի լվացման դեմ պայքարի արդյունավետությունը: Օրենքի կենսունակությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ընդունել մի շարք իրավական ակտեր: Ֆինանսական հատվածի համար դեռևս սահմանված չեն այն ընդհանուր պարտականությունները, որոնք փողերի լվացման հետ կապված կասկածների դեպքում կարող են ապահովել դրանց օպերատիվ կանխարգելումը: Չնայած ՀՀ Կենտրոնական բանկի Կանոնակարգում ընդգրկված են կասկածելի գործարքների հաղորդման ռեժիմի որոշ տարրեր, սակայն հաճախորդի ինքնության հաստատման և հաշվառման պահանջներն ընդհանուր առմամբ ամբողջական չեն, ուստի անհրաժեշտ է համապատասխան օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով սահմանել այդ պահանջները, ներառելով լվացող ֆոնդերի ձեռք բերումը, գործածումը և տիրապետումը: Կարևորվում է նաև հանցավոր ճանապարհով ստացած հասույթների պարտադիր բռնագանձման ընդհանուր սկզբունքի որդեգրումը: ՀՀ օրենսդրությամբ բռնագանձման ռեժիմը սահմանված է որպես լրացուցիչ պատժամիջոց: Ունեցվածքի բռնագրավումը պետք է պարտադիր լինի փողերի լվացման, խոշոր հասույթներ բերող այլ հանցագործությունների համար, այն տեսանկյունից, որ բռնագանձվեն ինչպես հասույթը, այնպես էլ ունեցվածքը և օժանդակության միջոցները: Անհրաժեշտ է ունենալ համապարփակ կանոնակարգային մեխանիզմներ, որոնք թույլ կտան իրականացնելու այդ կասկածելի գործարքների դադարեցումն ու կասեցումը: Բանկերում հաշիվ բացելու և հաճախորդների ինքնությունը պարզելու համար անհրաժեշտ է ընդունել այդ տեղեկությունները տրամադրող մարմինների ներքին կանոններ և ընթացակարգեր: Բազակայում են նաև իրենց բնույթով բարդ, մեծ, անսովոր գործարքների, բարձր ռիսկայնություն պարունակող հաշիվների շարունակական հսկողության կանոնները: Անհրաժեշտ է գործող օրենսդրությամբ սահմանել դրույթներ, որոնք բանկերին հնարավորություն կտան իրականացնելու նման հաշիվների և գործարքների շարունակական հսկողությունը: Հաճախորդների ինքնությունը ճշտելու մեխանիզմները բացակայում են նաև արժույթի փոխանակման կետերում և փողերի փոխանցումների ժամանակ: Խիստ անհրաժեշտ է սահմանել այդ կետերի կողմից և փողի մեծ քանակ փոխանակող հաճախորդների ինքնությունը ճշտելու պարտականությունը:

Խաղային արդյունաբերության ընդլայնումը պահանջում է, որ խաղատները նույնպես իրավունք ունենան հաճախորդների ինքնությունը ճշտելու, հաշվառման-գրառման, կասկածելի գործարքների մասին հաղորդելու հստակ ընթացակարգեր:

Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարի կազմակերպման համար անհրաժեշտ է.

-վավերացնել «Հանցանքի հասույթների լվացման, փնտրման, առգրավման և բռնագանձման մասին» ԵՎրախորհրդի 1990թ. Համաձայնագիրը.

-հնարավոր դարձնել փողերի լվացման դեպքում բռնագրավելու ինչպես ապօրինի հասույթները, այնպես էլ ունեցվածքը և հանցագործության միջոցները.

-ընդունել բանկերում և վարկային կազմակերպություններում ոչ մշտական և մշտական հաճախորդների ինքնությունը հաստատելու և հաշվառելու վերաբերյալ կանոններ.

-բանկերում և վարկային կազմակերպություններում ստեղծել հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության կանխարգելմանը զբաղվող կառուցվածքային ստորաբաժանումներ կամ առանձին աշխատակցի հաստիք.

-մշակել կասկածելի գործարքները երևան հանելու ուղեգույցեր.

-այլընտրանքային փողային փոխանցումային համակարգերի համար սահմանել հակափողավազման հստակ պահանջներ.

-կատարելագործել հեռագրային փոխանցումների դեպքում հաճախորդի ինքնությունը հաստատելու ընթացակարգերը:

-հաճախորդի ինքնությունը պարզելու քաղաքականությունն իրականացնելու նպատակով արգելել անանուն հաշիվների բացումը:

Գլուխ III. Քաղաքական կոռուպցիա

Քաղաքական համակարգում կոռուպցիայի կանխարգելումը կոռուպցիայի դեմ պայքարի կարևոր ուղղություններից է: Քաղաքական կոռուպցիայի կանխարգելման համար կարևոր նշանակություն է ունենալու նոր ընդունված «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքը, որով կանոնակարգվել են կուսակցությունների նվազագույն անդամակցության, տարածքային կառույցների, ֆինանսավորման, կուսակցությունների եկամուտների և ծախսերի մասին մանրամասն տարեկան ֆինանսական հաշվետվություն ներկայացնելը, դրանց հրապարակումը զանգվածային լրատվության միջոցներով, պետական բյուջեից կուսակցություններին տրվող հատկացումների համար հստակ չափանիշների ամրագրման դրույթները: Հասարակությունը պետք է շահագրգռված լինի քաղաքական կուսակցությունների կայացմամբ: Հայաստանի Հանրապետությունում չափազանց մեծ թվով քաղաքական կուսակցությունների առկայությունը նպաստում է քաղաքական կոռուպցիայի աճին: Հաճախ փորձաքիչ կուսակցություններն իրենց ձայնը կամ կարծիքը վաճառքի են հանում երկրի համար կարևոր նշանակություն ունեցող այս կամ այն խնդրի լուծման ընթացքում: Գրանցման համար միայն քանակական շեմի և տարածքային կազմակերպությունների թվի սահմանումը բավական չէ կոռուպցիայի նվազման համար: Անհրաժեշտ է սահմանել քաղաքական կուսակցությունների թվաքանակի և տեղերում տարածքային կազմակերպությունների գործունեության նկատմամբ հսկողության հստակ մեխանիզմներ: Այս առումով ընդունելի է միջազգային պրակտիկայում կիրառվող ընտրական հանձնաժողովներին այնպիսի լիազորություններով օժտելը, որը հնարավորություն կտա նրանց՝ կուսակցությունների թվաքանակի և տարածքային կազմակերպությունների առկայության նկատմամբ վերահսկողություն իրականացնել, ինչպես նաև հետևել կուսակազմական համագումարներում ազատ և արդար ընտրությունների անցկացմանը:

Քաղաքական կոռուպցիայի հաղթահարման համար կարևոր նշանակություն ունի նաև ընտրական համակարգի կատարելագործումը: Ընտրությունների ընթացքում, կոռուպցիան դրսևորվում է ընտրողների ձայների գնման եղանակով, երբ թեկնածուն և ընտրողը մտնում են մի գործարքի մեջ, որի արդյունքում ընտրողն ստանում է նյութական օգուտ, իսկ թեկնածուն՝ օժտվում է իշխանական լիազորություններով: Ընտրությունների ընթացքում կոռուպցիայի հնարավոր դեպքերից խուսափելու լավագույն միջոցն ընտրությունների անցկացման թափանցիկության ապահովումն ու քաղաքացիական հասարակության ինստիտուտների միջոցով հսկողության սահմանումն է: Հանրապետությունում ընտրությունների կազմակերպումը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու համար կարևոր է ընտրացուցակների կազմման, դրանց պարբերաբար թարմացման գործընթացի կանոնակարգումը համայնքներում, դիտորդների ինստիտուտի ուժեղացումը, մասնավորապես, տեղացի դիտորդների ուսուցումը, ընտրական հանձնաժողովների ձևավորման օպտիմալ սկզբունքի ներդրումը: Կարևոր խնդիր է նաև ընտրությունների, դիտորդների և կազմակերպիչների վարքագծի կանոնների մշակումը: Ընտրությունների նկատմամբ առավելագույն վստահություն ապահովելու նպատակով կարևորվում է նրանց թափանցիկությունը: Որպես կանոն դժգոհության տեղիք է տալիս իշխող կուսակցության կողմից հավելյալ պետական ռեսուրսների օգտագործումը: Այդ նպատակով էլ ընտրական համակարգը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու և ընտրարշավների ընթացքում կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու համար կարևոր նշանակություն ունի վարչական ռեսուրսի օգտագործման արգելումը: Այս մեղադրանքից խուսափելու լավագույն միջոցն ընտրությունների թափանցիկության ապահովումն է: Թափանցիկությունն իր մեջ ներառում է ընտրողների ցուցակների կազմումը, ընտրական հանձնաժողովների ձևավորումը, քվեաթերթիկների տպագրումը, նրանց քանակությունն ու տեղաշարժը:

վատահաված անձանց և դիտորդների իրավունքների ընդլայնումը, որքան շատ մարդ է առնչվում այդ գործընթացին, այնքան ավելի թափանցիկ է այն և դժվար է խախտումներ անել կամ թաքցնել դրանք:

Ընտրարշավների և ընտրությունների անցկացման ֆինանսավորումը նույնպես ընտրական գործընթացի կոռուպցիոն ռիսկեր պարունակող ոլորտներից է: Առաջին հերթին ընտրությունների ընթացքում քաղաքական կուսակցությունների շրջանում պետք է գործի վարքագծի փոխընդունելի կանոններ, որոնք պետք է նպաստեն բոլոր քաղաքական կուսակցությունների միջև քննարկումների և խորհրդատվությունների անցկացման: Կենտրոնական հանձնաժողովի կողմից: Անհրաժեշտ է ողջամտության սահմաններում սահմանափակել մասնավոր անձանց և կազմակերպությունների կողմից տրվող նվիրատվությունները, արգելել անանուն նվիրատվությունները, այն թեկնածուները, որոնց հայտարարագրերում ներկայացված կլինեն ոչ ճիշտ տվյալներ ստացված գումարների մասին կամ ծախսած կլինեն ավելի շատ գումարներ, քան նախատեսված է օրենքով, պետք է կորցնեն ընտրությունների միջոցով պաշտոն ձեռք բերելու իրավունքը, անհրաժեշտ է ընդունելի մակարդակի վրա պահել կամ ընդհանրապես արգելել վճարովի գովազդը հեռուստատեսությամբ:

Ազատ և արդար ընտրությունների անցկացման գլխավոր պայմաններից է նաև քվեարկության նկատմամբ վերահսկողության անցկացումը: Այս գործընթացում կարևորվում է քաղաքացիական հասարակության դերը, վերջինս իր ինստիտուտների միջոցով պետք է վերահսկի ընտրությունների կազմակերպման և անցկացման գործընթացը, սակայն չհետապնդելով որևէ նեղ քաղաքական շահ: Ընտրությունների անցկացման ընթացքում կարևորվում է նաև զանգվածային լրատվամիջոցների դերը: Նրանցում տրվող հաղորդումները պետք է լինեն օբյեկտիվ, արժանահավատ՝ հիմնված հավաստի փաստերի վրա, գեթ լրագրողի անձնական կարծիքից կամ քաղաքական կողմնորոշումից:

2003թ. ապրիլին Եվրոպայի խորհուրդն առաջարկել է «Քաղաքական կուսակցությունների և ընտրարշավների ֆինանսավորման գործում կոռուպցիայի դեմ պայքարի ընդհանուր կանոններ»: Կանոններում կարևորվում է քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման արտաքին աղբյուրների խնդիրը: Շեշտը դրվում է պետական աջակցության բաշխման օբյեկտիվությանն ու արդարությանը: Պետության աջակցությունը չպետք է ոտնահարի քաղաքական կուսակցության անկախությունը: Քաղաքական կուսակցություններին տրվող նվիրատվությունները պետք է բազառեն շահերի բախումը, ապահովեն նվիրատվությունների թափանցիկությունը, թույլ չտան քողարկված նվիրատվություններ, խուսափեն քաղաքական կուսակցության գործունեությանը և անկախությանը վնաս պատճառելուց: Պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի նվիրատվությունների սահմանված չափը շրջանցելու փորձերի դեմ: Իրավաբանական անձանց կողմից կատարվող նվիրատվությունների մասին պետք է լայնորեն իրազեկել և բաժնետերերին և հասարակությանը: Պետությունը պետք է արգելի քաղաքական կուսակցություններին պետական ձեռնարկությունների կողմից կատարվող նվիրատվությունները: Այս արգելող կանոնները պետք է տարածվեն նաև քաղաքական կուսակցություններին այս կամ այն կերպով կապված իրավաբանական անձանց նկատմամբ: Պետության կողմից պետք է արգելվի նաև նվիրատվությունները օտարերկրյա դոնորների կողմից: Քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման սահմանափակումները և արգելքները պետք է տարածվեն նաև մեծամասնական ընտրակարգով ընտրվող թեկնածուների նկատմամբ: Քաղաքական կուսակցությունների հաշիվների թափանցիկության կանոնները պետք է տարածվեն նաև նրանց հետ կապված իրավաբանական անձանց հաշիվների վրա: Այդ նպատակով պետք է քաղաքական կուսակցություններն առնվազն տարին մեկ անգամ հրապարակեն իրենց հաշիվների ամփոփագրերը, ներառյալ նվիրատվությունները և իրենց հետ կապված իրավաբանական անձանց հաշիվները: Քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման վերահսկողությունն իրականացնելու համար Եվրոպայի խորհուրդն առաջարկում է հատուկ մասնագիտացված աշխատակազմի առկայություն: Կարևորվում է նաև նման խախտումների հայտնաբերման դեպքում համապատասխան սանկցիաների կիրառման անհրաժեշտությունը:

Գլուխ IV. Տեղական ինքնակառավարում և տարածքային կառավարում

Տեղական ինքնակառավարումը՝ լինելով բնակչությանը ծառայություններ մատուցող ամենամոտ համակարգը, հասարակության մեջ կարծիք է ձևավորում ոչ միայն այդ համակարգի, այլ նաև պետության մասին: Հանդիսանալով ժողովրդի իշխանության իրականացման առանձին ձև՝ տեղական ինքնակառավարումը ենթադրում է տեղական ինքնակառավարման մարմինների որոշակի ինքնուրույնություն: Տեղական ինքնակառավարման մարմինները տեղական նշանակության հարցերը լուծելու համար օժտված են սեփական իշխանական լիազորություններով: Տեղական ինքնակառավարումը ժողովրդահիշխանության լավագույն ձևն է, սակայն տեղական ինքնակառավարման համակարգային ամբողջականության ձևավորման համար խիստ կարևոր է այն հստակ տարանջատել տարածքային կառավարումից, քանի որ պետական իշխանության կողմից հաճախ գալիս են տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, որը և այդ համակարգում կոռուպցիայի հիմնական աղբյուրներից մեկն է: Տեղական ինքնակառավարման ինքնուրույնությունը հնարավոր է միայն համապատասխան ֆինանսանյութական ռեսուրսների առկայության պայմաններում: Տեղական ինքնակառավարման ֆինանսական ինքնուրույնությունը երաշխավորվում է տեղական բյուջեն ինքնուրույն ձևավորելու, հաստատելու և կատարելու՝ տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրական իրավունքով: Սակայն միշտ չէ, որ տեղական ինքնակառավարման մարմինները տնօրինում են անհրաժեշտ ֆինանսական միջոցներ: Այստեղ էլ հրենց դրսևորումներն են գտնում կոռուպցիոն երևույթները: Պետական իշխանության մարմինների կողմից տեղական մարմինների գործունեությանը միջամտելու հիմնական լծակը համայնքների ծրագրերի իրականացման ֆինանսավորումն է: Ուստի, կորուպցիայի դեմ պայքարում կարևորվում է տեղական ինքնակառավարման ֆինանսատնտեսական ինքնուրույնության ապահովումը, որը ժողովրդահիշխանության ինքնուրույնության սկզբունքի գլխավոր տարրերից է: Տեղական ինքնակառավարման մարմիններում հակակոռուպցիոն պայքարի միջոցներից է քաղաքացիական հասարակության կողմից վերահսկողության, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության ու տեղական բյուջեի կազմման եւ ծախսերի ֆինանսական հաշվետվությունների թափանցիկ համակարգի ձևավորման, տեղական մակարդակով բյուջեի կատարման հաղորդումների և քննարկումների կազմակերպումը: Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը պետք է լինի թափանցիկ և հրապարակային: ՀՀ քաղաքացիներն օժտված են այնպիսի իրավունքներով, որոնք նրանց հնարավորություն են ընձեռում ակտիվորեն մասնակցելու ինչպես տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորմանը, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ իրականացնելու վերահսկողություն, որոնց հետևողականորեն իրազույն կոռուպցիայի դեմ պայքարի կարևորագույն գործիքներից է:

Կարևոր է նաև տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների անձնական պատասխանատվության բարձրացումը, համայնքների ղեկավարների և ավագանու անդամների վարքագծի կանոնների մշակումը, մունիցիպալ ծառայության մասին օրենքի ընդունումը, որը կկարգավորի համայնքների աշխատակազմերը պրոֆեսիոնալներով համալրելու խնդիրը: Ծառայությունների մատչելիության ապահովման եւ հակակոռուպցիոն պայքարի համար կարևոր է մունիցիպալ ծառայությունների կանոնակարգումը:

Տեղական ինքնակառավարման մարմիններն ընդգրկված չեն պետական իշխանության համակարգում: Դա նշանակում, որ տեղական ինքնակառավարման մարմինները չեն հանդիսանում պետական իշխանության մարմինների միասնական ստորադաս համակարգի օղակներ: Համաշխարհային փորձը վկայում է, որ տեղական ինքնակառավարման մակարդակում ամենից հաճախ ապահովվում է ոչ թե իշխանությունների հավասարակշռությունը տեղական ինքնակառավարման համակարգում, այլ իշխանություններից մեկի գերակայությունը՝ մյուս իշխանության նկատմամբ: Տարածքային կառավարումը լինելով գործադիր իշխանության տեղայնագլխած տարածքային օղակ սերտորեն կապված է տեղական ինքնակառավարման հետ: Կոռուպցիոն դրսևորումներն այստեղ արտահայտվում են համապետական և տեղական շահերի բախման միջոցով: Ուստի, կարևորվում է այդ երկու շահերի ճիշտ ուղղորդման իրականացումը գործառնությունների

տարբերակաման սկզբունքով: Ձսպումների և հակակշիռների համակարգն այստեղ թույլ է գործում: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում կատարված փոփոխություններն ամրագրեցին զսպումների ու հակակշիռների նոր մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տալիս խուսափել գործադիր իշխանության կողմից տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների զավթումից: Այս առումով կարևորվում է «Տարածքային կառավարման մասին» օրենքի ընդունումը, որով կհստակեցվեն տարածքային կառավարման մարմինների լիազորությունները և դրանք կտարնջատվեն տեղական կառավարման մարմինների լիազորություններից: Կարևոր է նաև տարածքային կառավարման համակարգում ներդրված քաղաքացիական ծառայության համակարգի հետագա կատարելագործումը:

Գլուխ V. Հանրային կառավարում

Պետական կառավարման համակարգի բարեփոխումներն արդեն ուժի մեջ են, որպես կառավարության գործունեության ծրագիր, և ներառում են դրույթներ, որոնք հակակոռուպցիոն կարևոր ուղղվածություն ունեն: 2001 թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի ընդունումը, դրանում ամրագրած սկզբունքների իրականացումը, հնարավորություն ընձեռեցին առաջին քայլերն իրականացնելու այս ոլորտում կոռուպցիայի հաղթահարման գործում, սակայն կիրարկման ընթացքում քաղաքացիական ծառայություններն անհրաժեշտություն են առաջացրել կատարելագործել քաղաքացիական ծառայության ողջ համակարգը: Բարեփոխումների արմատական խնդիրներից է պետական սահմանակարգային (ինստիտուցիոնալ) կառույցների օպտիմալացումը, պետության կողմից իրականացվող գործառնությունները պետության ներուժին համապատասխանեցումը, նրա գործունեության թափանցիկության, հրապարակայնության, կառավարչական որոշումների կայացման գործում պրոֆեսիոնալիզմի, մասնագիտացված ծառայության, վերահսկողության հստակ համակարգերի կայացումը:

Պետական կառավարման համակարգի բարեփոխումներում կառուցվածքային, կազմակերպական և գործառնության վերաբաշխման իրականացումը, պետական կառավարման համակարգի օպտիմալացումը, նախարարությունների կառավարման կառուցվածքի միասնականացումը, քաղաքացիական ծառայողների վարքագիծը կանոնակարգող էթիկայի կանոնների դրույթների կիրառումը և պահպանման ապահովումը, քաղաքացիական ծառայողների առեստավորման, մրցույթների անցկացման թափանցիկության և նրանց նկատմամբ հասարակական վերահսկողության ապահովումը, վերահսկողություն իրականացնող մարմինների գործառնությունների տարանջատումը և կրկնությունների բացառումը, հաշվետվության համակարգի ներդրումը, պետական բարձրաստիճան պաշտոնյաների կողմից իրենց ոլորտի մասնավոր կազմակերպությունների ընտրովի ղեկավար պաշտոններ զբաղեցնելու կամ խոշոր փայատերեր հանդիսանալը սահմանափակումը, նրանց կողմից տարեկան հաշվետվությունների ներկայացումը կկրճատեն կոռուպցիան և բյուրոկրատական քաշքշուկը: Այս առումով կարևորվում է պետական ծառայողի վարքագծի կանոնների վերամշակումը, այդ կանոնների խախտման դեպքում պատժամիջոցների հստակ մեխանիզմների ներդրումը:

Կոռուպցիայի դեմ պայքարում պետական կառավարման համակարգի զարգացումը պահանջում է ընդլայնել պետական մարմինների գործունեության հրապարակայնությունը, թափանցիկությունը, հաշվետվությունը, քաղաքացիական հասարակության ներգրավումը և մասնակցության ապահովումը հանրային ծառայությունների մատուցման և որոշումների ընդունման գործընթացներում: Վերջիններիս իրականացման համար պահանջվում է ստեղծել ինստիտուցիոնալ նախադրյալներ, ինչպիսիք են հանրային ծառայությունների (ըստ ծառայության տեսակների կրթություն, առողջապահություն, մշակույթ և այլն) մատուցման մեխանիզմների հստակեցումը, դրանց օրենսդրական հիմքերի ձևավորումը, ծառայությունների մատուցման որակի բարձրացումը, արդյունավետ կառավարման մեխանիզմների առաջադրումը

ՀՀ Սահմանադրության փոփոխություններով նախատեսված «Հանրային (պետական) ծառայությունների մասին» ՀՀ օրենքի մշակումը կամբողջացնի պետական ծառայությանը ներկայացվող միասնական պահանջները, կապահովի ծառայությունների միջև կապերի և

կադրերի տեղաշարժը՝ նվազագույնի հասցնելով ստորին օղակների պաշտոնյաների կողմից որոշումների կայացման գործունը:

Որոշումների ընդունման գործընթացների և կառավարման կառուցվածքների բարելավման բնագավառում կառավարության կառուցվածքի ռացիոնալացմանը կապահովվի պետական ծառայության բարեփոխումների շարունակականությունը, կօպտիմալացվեն հանրային ծառայություններ մատուցող պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության շրջանակները, աշխատողների թիվը:

Կառավարման մարմինների գործառույթների և չափերի օպտիմալացման, պրոֆեսիոնալ ծառայության ներդրման տեսանկյունից կարևորվում են պետական մարմինների համապատասխան քաղաքացիական ծառայողների վերապատրաստումը, հանրային և քաղաքացիական ծառայության մոդելի ներդրումը ՏԻՄ-երի աշխատակազմերում և համայնքային բյուջետային կազմակերպություններում:

Պետական կառավարման համակարգի թերությունների բացահայտման գործում, կոռուպցիայի դեմ պայքարում կարևոր նշանակություն ունի հանրության բողոքարկումների մեխանիզմի ներդրումը: Այն նպաստում է պետական հաստատությունների հանդեպ վստահության ձևավորմանը և գործիք է կոռուպցիայի դեմ տարվող պայքարում հանրության մասնակցությունն ապահովելու համար:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից քաղաքացիների դիմումների և բողոքների քննարկումը նույնպես կնպաստի քաղաքացիական ծառայողների պատասխանատվության և պետական կառավարման մարմինների աշխատանքի արդյունավետության բարձրացմանը: «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի ընդունումը ի թիվս այլ հարցերի սահմանում է նաև մարդու իրավունքների պաշտպանի կողմից տարեկան զեկույցի վերաբերյալ քաղաքացիական հասարակության գնահատման մեխանիզմները, որոշ ժողովրդավարության և կոռուպցիայի դեմ պայքարի լավագույն միջոցներից է:

Շահերի բախում

Կառավարության և պետական պաշտոնյաների հիմնական խնդիրը հանրային շահերին ծառայելն է: Պաշտոնավարման ընթացքում անձնական շահի հետապնդող պաշտոնյան վտանգավոր է պետության համար: Անձնական և պետական շահերի բախումը կարող է սպառնալ պետության նկատմամբ քաղաքացիների անվստահության ձևավորմանը: Նկատի ունենալով նման վտանգի հնարավորությունները, միաժամանակ հաշվի առնելով արդյունավետ կառավարման խնդիրները, շատ երկրներ ընդունել են օրենք շահերի բախման մասին: Շահերի բախումը պետական ծառայողի կողմից իրացվող անձնական շահի և պետական մարմնի օրինական շահի հակասությունն է, որը վերջին հաշվով յուծվում է հօգուտ անձնական, երրորդ անձի կամ որոշակի խմբի շահերի:

Սակայն պարտադիր չէ նման օրենքի ընդունումը, կարելի է շահերի բախման մասին դրույթներ ամրագրել պետական ծառայության տարբեր ոլորտների աշխատակիցների վարքագծի կանոններում: Անհրաժեշտ է սահմանել պետական ծառայողների վարքագծի հստակ և սպառիչ կանոններ, որոնք պետք է լինեն օբյեկտիվ, ողջամիտ և ապահովված լինեն դրանց խախտման համար պատասխանատվության հստակ և գործող մեխանիզմներով: Գլխավորը՝ իշխանության երեք թևերի համար վարքագծի միասնական սկզբունքների մշակումն է, որոնց պահպանումը պետական ծառայողներին կապահովագրեն շահերի բախում արգելող օրենքների դրույթներն ու հասարակության կողմից ընդունված բարոյական նորմերը խախտելուց: Միաժամանակ, պետական ծառայողի համար շահերի բախումը սահմանափակող սկզբունքների առկայությունն ու դրանց խախտման համար պատասխանատվությունը պետք է սահմանեն այնպիսի սանկցիաներ, ինչպիսիք են նկատողությունը, պաշտոնից հեռացումը, պաշտոնի իջեցումը, ընդհուպ մինչև քրեական պատասխանատվություն:

Շահերի բախումից խուսափելու լավագույն ձևերից մեկը պետական պաշտոնյաների ունեցվածքի և եկամուտների հայտարարագրումն ու դրանց մասին հասարակությանը տեղյակ պահելն է: Այդ գործընթացի թափանցիկության ապահովումը կնպաստի.

- բարձրագույն իշխանությունների նկատմամբ հասարակության վստահությունը.

- ցուցադրելու պետական ծառայողների ազնվությունը,
- խուսափելու պետական ծառայությունում այնպիսի պաշտոնյաների ի հայտ գալուն, որոնք չեն կարող դիմանալ հասարակության քննադատությանը,
- թույլ տալու հասարակությանը ինքնուրույն գնահատելու պետական ծառայողների ազնվությունն ու անկաշառությունը:

Ուստի նպատակահարմար է մինչև պաշտոնի ստանձնելը կամ դրանից հետո հնգօրյա ժամկետում հրապարակել պաշտոնների հավակնորդների ֆինանսական վիճակի մասին տեղեկություններ, նման տեղեկատվություն հրապարակել նաև պաշտոնավարումն ավարտելուց հերո: Նման հրապարակումները հասարակությանը հնարավորություն կտան կարծիք կազմելու տվյալ պաշտոնյայի ազնվության, անկաշառության և անաշառության մասին, միաժամանակ կապիովի իշխանության գործունեության նկատմամբ հասարակության վերահսկողության գործառնության իրականացու: Շահերի բախման կանխարգելման լավագույն միջոցներից է նաև պետական ծառայողների մշտական ուսուցումը և համապատասխան գերատեսչություններում ծառայողների վարքագծի համար պատասխանատուի հաստիքի ստեղծումը:

Պետական ծառայողի վարքագծի կանոններում պետք է սահմանվեն հետևյալ սկզբունքները.

-Պետական ծառայությունը պատասխանատվություն է հասարակության հանդեպ, որը պահանջում է հավատարմություն Սահմանադրությանը, օրենքներին, վարքագծի սկզբունքներին և վեր է անձնական շահից:

-Պետական ծառայողը իրավունք չունի ունենալ իր ծառայական պարտականությունները բարեխիղճ կատարելուն հակասող ֆինանսական շահեր:

-Պետական ծառայողն իրավունք չունի մասնակցել ֆինանսական գործարքների և օգտագործել պետական տեղեկատվությունն անձնական շահ ստանալու նպատակով:

-Պետական ծառայողն իրավունք չունի ընդունել որևէ նվիրատվություն, որը պահանջում է համապատասխան ծառայություններ նվիրատուին:

-Պետական ծառայողը պետք է ազնվորեն կատարի իր պարտականությունները:

-Պետական ծառայողն իրավունք չունի իր ծառայության անունից վերցնելու անօրինական պարտականություններ և տա նման խոստումներ:

-Պետական ծառայողն իրավունք չունի օգտագործելու իր պաշտոնական դիրքն անձնական շահ ստանալու նպատակով:

- Պետական ծառայողը պարտավոր է պահպանել պետական ունեցվածքը:
- Պետական ծառայողը պարտավոր է համապատասխան մարմիններին հայտնել յուրազման, վատման, խաղախտության, չարաշահման և կոռուպցիոն մյուս դեպքերի մասին:
- Պետական ծառայողը պարտավոր է բարեխիղճորեն կատարել իր քաղաքացիական պարտականությունները, այդ թվում՝ ֆինանսական:

Սակայն այս սկզբունքները կարող են արդյունավետ գործել միայն այն դեպքում, երբ դրանց իրականացման համար սահմանվեն վարչական, քաղաքացիական և քրեական համարժեք սանկցիաներ:

Շահերի բախումների մեծ մասն ակնհայտ է: Նեպոտիզմը (խնամիականությունը) և հովանավորությունը զգալի վնաս են հասցնում պետության շահերին: Կոռուպցիոն այս ձևերի առկայությունը նշանակում է, որ այս կամ այն պաշտոնին հավակնող արժանի թեկնածուն չի կարողանում հասնել տվյալ պաշտոնին, որի արդյունքում տուժում է ողջ հասարակությունը: Այս առումով կարևորվում է քաղաքական և հայեցողական պաշտոններ զբաղեցնող պաշտոնատար անձանց վարքագծի կանոնների մշակումը, քանի որ վերջին հաշվով նրանք են որոշում այս կամ այն պաշտոնում՝ մրցույթում հաղթած անձի նշանակման խնդիրը:

Խիստ կարևոր է նաև վարքագծի այս կանոններում պաշտոնատար անձանց՝ պետական պաշտոնից ազատվելուց հետո մասնավոր հատվածում աշխատանքի ընդունվելու արգելքի սահմանումը, քանի որ պաշտոնի բերումով ստացված տեղեկությունների տիրապետման հետևանքով այդ անձինք մասնավոր հատվածի համար դառնում են անգնահատելի ձեռքբերում: Սակայն միայն վարքագծի կանոնների ընդունումը չի կարող խոչընդոտել պաշտոնական տեղեկատվության արտահոսքին, քանի որ պաշտոնից ազատվելուց հետո

պաշտոնաթող պաշտոնյայի համար այն դառնում է առոչինչ: Միջազգային պրակտիկայում ընդունված լավագույն փորձն այդ հարցերի կարգավորումն է ծառայողական էթիկայի հարցերով խորհրդակցանի կամ պետական կառավարման էթիկայի գրասենյակաների միջոցով:

Հանրային ծառայությունների ոլորտ

Հանրային առանձին ծառայությունների առանձնահատկություններին համապատասխան՝ ամենասեղմ ժամկետում հանրային ծառայողների վարձատրության ռազմավարության մշակումը, վերապատրաստումը և նրանց սոցիալական երաշխիքների ապահովումը, կնպաստի հանրային ծառայությունների մատուցման որակի բարձրացմանը, քաղաքացիների բողոքների թվի կրճատմանը, բյուրոկրատական քաշքշուկների և կոռուպցիայի նվազեցմանը:

Հանրային ծառայությունների ապակենտրոնացումը հնարավորություն կստեղծի մեծացնելու ծառայությունների մատուցման մատչելիությունը, հստակեցնելու իշխանության առանձին մարմինների դերը, ինչպես նաև մշակելու վերահսկողության մեխանիզմները և կոնկրետացնելու պատասխանատուներին:

Առողջապահության բնագավառ

Առողջապահության ոլորտում ոչ պաշտոնական վճարումները հանդիսանում են համակարգի բարեփոխումների էական խոչընդոտ, քանի որ ստեղծում են ֆինանսական հսկողությունից դուրս գտնվող բավականին մեծ դաշտ: Հիվանդների կողմից վճարումները կատարվում են մասնավոր անձանց և ոչ թե կազմակերպություններին կամ բյուջետային համակարգին և այդ իսկ պատճառով բացառում են առողջապահական համակարգի որևէ բարելավում: Ոչ պաշտոնական վճարումների պրակտիկան միջազգային չափանիշներին բավարարող ծախսային հաշվառման հիմնական սզբունքների և թափանցիկ ֆինանսական համակարգի բազակայության հետևանք է: Բազակայում են կոնկրետ հիվանդության գծով բուժսպասարկման պետական ֆինանսավորման հստակ և ամբողջական չափորոշիչներ (ստանդարտներ), ինչը թույլ է տալիս պետական ֆինանսավորումն իրականացնել առանց հաշվի առնելու բուժսպասարկման իրական ինքնարժեքը (ղեղամիջոցների, առանձին տեխնոլոգիաների կիրառման արժեք, բուժանձնակազմի վարձատրություն, հիվանդության բարդության աստիճան և այլն): Առողջապահության ոլորտում հակակոռուպցիոն միջոցառումների շարքում անհրաժեշտ է իրականացնել ինստիտուցիոնալ բարեփոխումներ և գոյություն ունեցող կառուցվածքային, կազմակերպական և կառավարման համակարգերի վերակազմակերպում: Ուետի, առաջարկվում է.

- խթանել մասնավոր հատվածի՝ արդար, շուկայական մրցակցության պայմաններով թելադրված, ձևավորումը,
- առողջապահական կազմակերպությունների մասնավորեցման գործընթացում հաշվի առնել յուրաքանչյուր բուժմիավորի առանձնահատկությունները,
- շարունակել սոցիալապես անապահով անձանց բժշկական օգնությունը և սպասարկումը պետական պատվերի շրջանակում՝ առանձին ակտերով հստակ կանոնակարգելով նշված բնագավառը,
- փոխել բուժհաստատություններին տրվող պետական պատվերների տեղաբաշխման համակարգը, դրանք բուժհիմնարկներին հատկացնելով մրցոթային կարգով՝ ըստ հիվանդության տեսակների և տարածքային հայտանիշի, սահմանելով բժշկական ծառայության որակական և տեխնիկական չափորոշիչներ,
- մեծացնել պետության և պետական բուժհիմնարկների միջև փոխադարձ պարտավորությունների կատարման երաշխիքները, դրա համար մշակելով հակընդդեմ լծակների թափանցիկ մեխանիզմներ և իրավասություններ,

- ընդունել «Բժշկական ապահովագրության մասին» օրենք, որը կնպաստի բուժփինանարկություններում ծառայությունների վճարման նպատակով կանխիկ դրամաշրջանառության, հետևապես կոռուպցիոն հնարավոր դրսևորումների նվազմանը ,
 - պետական միջոցառումների շարքում գերիշխող դարձնել առողջապահական կանխարգելիչ բնույթի միջոցառումները, որոնք պետությանը թույլ կտան խուսափել հետագա մեծ ծախսերից,
 - բարձրացնել առողջապահական համակարգի քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում բժշկական ասոցիացիաների դերը: Ջարգացած երկրների օրինակով, առողջապահական համակարգի քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում բժշկական ասոցիացիաների մասնակցությունը մեծապես կնպաստի համակարգի արդյունավետությանը,
 - բարելավել առողջապահական տեղեկատվական համակարգը՝ ներդնելով միասնական տեղեկատվական-համակարգչային ցանց.
 - սահմանել առանձին հիվանդությունների գծով բուժսպասարկման պետական ֆինանսավորման հստակ և ամբողջական չափորոշիչներ, որոնք կներառեն կոնկրետ հիվանդության բուժման իրական ինքնարժեքը.
 - ներդնել բուժօժանդություն մատուցող կազմակերպությունների լիցենզավորման և հաստատությունների հավատարմագրման հստակ համակարգ:
- Առողջապահության համակարգում կոռուպցիոն ռիսկերի կրճատմանը կարող է նպաստել նաև դեղորայքի ստվերային շրջանառության նվազման նպատակով կենտրոնացված կերպով գնվող դեղորայքը մարդասիրական օգնությունից տարբերակելու համար դեղերի հաշվառման և բաշխման համակարգի ներդրումը:

Բնապահպանության բնագավառ

Շրճակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, րնդերի, կենսական ու բուսական աշխարհի պահպանությունը, դրանց վերականգնումը, բնական ռեսուրսների բնական, արդյունավետ օրտագործման բարելավումը մշտական պետական հոգածության կարիք է զգում: Էներգետիկ ճգնաժամի տարիներն իրենց վնասակար հետևանքները թողեցին ոչ միայն բնության պահպանության վրա, այլ նաև այդ բնագավառում նպաստեցին այնպիսի երևույթների արմատավորմանը, որոնք բնապահպանության որոտոր դարձրեցին կոռուպցիոն բարձր ռիսկայնություն ունեցող բնագավառներից մեկը: Վերջին տարիներին կատարվող համրային կառավարման ոլորտի բարեփոխումներն իրենց դրական ազդեցությունն են ունեցել բնապահպանության ոլորտում կոռուպցիոն դրսևորումների նվազման գործընթացի վրա, սակայն հանրապետությունում տարվող յայնսածավալ շինարարական աշխատանքները, նախկին կենտրոնացված ջեռուցման համակարգի փլուզումը, բնակչության սոցիալական անբավարար վիճակն առայժմ խոչընդոտում են այդ բնագավառում կոռուպցիայի դեմ տարվող պայքարին: Այս ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարն արդյունավետ դարձնելու նպատակով կարևորվում է բնապահպանության նախարարության վերահսկողական գործառույթների հստակեցումը և գործուն մեխանիզմների մշակումը : Այդ նպատակով անհրաժեշտ է մշակել «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենք: Բնապահպանական, տեսչական վերահսկողության, անտառների և բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանություն իրականացնող մարմինների գործունեության արդյունավետության բարելավման նպատակով անհրաժեշտ է «Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման» ծրագրի շրջանակներում լուծել բնապահպանական տեսչական համակարգի անտառակառավարման, բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության համակարգերի տեխնիկական վերագինման, տեղեկատվական գանգի ստեղծման, տրանսպորտի և այլ փոխադրամիջոցների, տեխնիկական միջոցների ապահովման խնդիրները: Հատկապես ուշադրություն դարձնելով «Սևան» և «Դիլիջան» ազգային պարկերի պահպանության, տեխնիկական վերագինման խնդիրներին: Կարևորվում է նաև բնապահպանական տեսչական, անտառակառավարման, բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության համակարգերի կադրերի պատրաստման խնդիրը, այդ

Նպատակով անհրաժեշտ է ստեղծել այդ համակարգերի աշխատողների վերապատրաստման կերտրոն:

Կրթության բնագավառ

Կրթության ոլորտը պետական թերֆինանսավորման հետևանքով հայտնվել է ոչ նպաստավոր իրավիճակում: Այս ոլորտում մեծապես կարևորվում է համալիր միջոցառումների իրականացման հրատապությունը, որոնք դրական հանգուցալուծում կտան առկա կոռուպցիոն երևույթներին:

Դպրոցում հակակոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով գիտելիքների գնահատման կենտրոնի միջոցով անհրաժեշտ է ներդնել նոր, գիտականորեն հիմնավորված և միջազգային չափանիշներին համապատասխանող քննական համակարգ, որը մրցութային հիմունքներով կապահովի յուրաքանչյուր քաղաքացու համար կրթության հավասարությունն ու մատչելիությունը:

«Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» օրենքի ընդունումը և արդեն ընդունված «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը կնպաստեն կրթության բնագավառում կոռուպցիոն երևույթների կանխարգելմանը: Հատկապես կատարելագործման կարիք է զգում բարձրագույն հաստատություններում պետական պատվերի տեղաբաշխման համակարգը:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում կոռուպցիային նպաստող գործոններից է բանակում ծառայելու համար տարկետման իրավունքի առկայությունը, անհրաժեշտ է հիմնովի փոփոխել այդ քաղաքականությունը և վերազնել պետական բուհերում սովորողների համար բանակում ծառայելու համար տարկետում ստանալու արտոնությունը, որով հավասար պայմաններ կստեղծվի պետական և ոչ պետական բուհերի սովորողների համար:

Կոռուպցիայի դեմ պայքարում կարևորվում է նաև ուսումնական հաստատությունները դասավանդող որակյալ կադրերով համայրելու խնդիրը, որն իրականացնելու համար անհրաժեշտ է մշակել ուսուցիչների և դասախոսների որակավորման կանոններ:

Հասարակության յուրաքանչյուր անդամի մոտ կոռուպցիայի հանդեպ անհանդուրժողականություն սերմանելու համար նպատակահարմար է դպրոցներում և բուհերում դասավանդելու համար մշակել և ներդնել կոռուպցիան ծնող պատճառների, բազասական հետևանքների մասին հատուկ ծրագիր:

Կոռուպցիոն երևույթների տարածվածությունը բավականին մեծ է նաև բուհական և հետբուհական համակարգերում: Այստեղ կոռուպցիոն հիմնական օղակներն են՝

- ընդունելության քննությունները,
- բուհի ընթացիկ քննությունները,
- ավարտական քննությունները,
- ընդունելությունը հետբուհական ծրագրերում (մագիստրատուրա, ասպիրանտուրա և այլն),
- ԲՈՒՀ-երի լիցենզավորման ընթացակարգը:

Նշված օղակներում կոռուպցիոն երևույթները վերացնելու համար օրենսդրական փոփոխություններին զուգահեռ պետք է անցկացնել կանխարգելիչ-կազմակերպչական մի շարք միջոցառումներ:

Առաջարկվում է.

1. Ընդլայնել կրթական հաստատությունների ինքնավարությունը: Կառավարման տեսակետից հույժ կարևոր է կրթական հաստատության տնօրենի նշանակման հարցը, ինչն առաջարկվում է իրականացնել խորհուրդներով կառավարվող դպրոցների համար սահմանված կարգով.
2. Հանրակրթական հաստատություններում ստեղծել թափանցիկ, օրինական և պատճառաբանված վճարումների համակարգ.
3. Փոխել բուհերի ընդունելության անցկացման ներկայիս գործող կարգը՝ «գնահատման կենտրոնների» համակարգով, հիմնականում պահպանելով դրանց

կենտրոնացված բնույթը, առավելագույնս կրճատել մարդկային գործոնի մասնակցությունը ընդունելության համակարգին.

4. Վերացնել բոլոր տեսակի ուղղակի արտոնությունները (մեդալներ, ընդունելությունը հենակետային վարժարաններից), բուհ ընդունվողների մեկնարկային պայմանները բոլորի համար միասնականացնել.

4. Բարձրագույն և մասնագիտական կրթություն ստանալու համար սահմանված պետպատվերի շրջանակներում ընդգրկել նաև սոցիալապես անապահով խավերի ներկայացուցիչներին: Պետպատվերի ձևավորման ժամանակ առաջնային համարել դիմորդի սոցիալական պաշտպանվածության աստիճանը.

5. Բարձրագույն ուսումնական հաստատություններում պետպատվեր սահմանել գիտելիքների ֆինանսավորման սկզբունքով՝ յուրաքանչյուր բննաշրջանի արդյունքներով:

7. Ստեղծել հավասար պայմաններ պետական և ոչ պետական հավատարմագրված բուհերի գործունեության համար, սահմանելով, որ ոչ պետական հավատարմագրված բուհերում նույնպես ներդրվի պետպատվերի համակարգը.

8. Բուհական համակարգի ներսում կիրառել վարչական կանխարգելիչ միջոցառումներ, որոնք առավելագույնս կկրճատեն առկա արատավոր երևույթները.

9. Ներդնել «կազմակերպությունների պատվերի» գաղափարը, ինչը կամուրջ կհանդիսանա կազմակերպությունների և կրթական համակարգի միջև նպաստելով կրթական համակարգում բավարար չափով ֆինանսական միջոցների ներգրավմանը (այդպիսի օրինակ կարող է հանդիսանալ ֆինանսաբանկային քոլեջի և ՀՀ ԿԲ-ի ու հայաստանյան խոշոր բանկերի միջև համագործակցությունը):

Վերոհիշյալ միջոցառումների համատեքստում մեծ կարևորություն ունի նաև մանկավարժների աշխատավարձի և սոցիալական ապահովության խնդիրը:

Գլուխ VI. Իրավապահ մարմիններ

Կոռուպցիայի՝ որպես քրեափրավական երևույթի դեմ պայքարն իրականացնում են՝ ոստիկանությունը, ազգային անվտանգության մարմինները, դատախազությունը : Կոռուպցիոն բնույթ կրող հանցագործությունների դեմ պայքարում իրավապահ մարմինների հետագա բարեփոխումները հակակոռուպցիոն քաղաքականության առաջնահերթ խնդիրներից են: Այդ պայքարի արդյունավետության բարձրացման համար նպատակահարմար է՝

- իրականացնել կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումներ,

- բարելավել իրավապահ մարմինների նյութատեխնիկական զինվածության մակարդակը, ներդնել տեղեկատվական նոր տեխնոլոգիաներ,

- իրավապահ մարմինների աշխատողների մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով կազմակերպել մշտական գործող դասընթացներ՝ կոռուպցիայի կանխարգելման, բացահայտման և քննության առանձնահատկությունների վերաբերյալ,

- իրավապահ մարմինների աշխատողների կողմից ծառայողական պարտականությունները կատարելու, պաշտոնական լիազորություններն անցնելու, ծառայության հետ կապված սահմանափակումները կանոնակարգելու նպատակով մշակել իրավապահ մարմինների աշխատողների վարքագծի կանոններ:

Հանրապետությունում տիրող սոցիալական ընդհանուր վիճակն իր ազդեցությունն է թողնում նաև իրավապահ մարմինների աշխատողների վրա: Իրավապահ մարմիններում կոռուպցիոն դրսևորումների նվազեցման համար անհրաժեշտ է մշակել կոնկրետ միջոցառումների ծրագիր և իրագործման ժամանակացույց՝ իրավապահ մարմինների ծառայողների վարձատրության և սոցիալական ապահովության բարձրացման ուղղությամբ:

Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման համար խիստ կարևոր է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված և օգոստոսի 1-ից գործողության մեջ դրված Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգիրքը, որով փորձ է արվել ի թիվս այլ հարցերի կանոնակարգել և հստակեցնել կոռուպցիոն բնույթ կրող քրեափրավական արարքների սահմանումները, դրանց համապատասխանեցնել կիրառվող քրեափրավական պատժամիջոցները կամ պատժաչափերը կատարված կոռուպցիոն հանցանքների բնույթին և վտանգավորության աստիճանին, այն հաշվով, որպեսզի բացառվեն չարաշահումներն օրենքի

կիրառման դեպքում, ինչպես նաև պատիժը նպաստի հանցագործությունների կանխարգելմանը: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նաև համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում՝ այն համահունչ դարձնելու համար նոր ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի դրույթներին՝ բացառելով դրանց միջև եղած մի շարք հակասությունները:

Անչափ կարևոր է նաև «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» օրենքի ընդունումը, որն էականորեն կբարձրացնի կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետությունը: Կանոնակարգվի, փաստորեն, իրավահարաբերությունների մի ամբողջ համակարգ, որը մինչ օրս ըստ էության կանոնակարգված չէ: Կհստակեցվեն նաև թե օպերատիվ հետախուզական գործունեության որ տեսակը, որ իրավապահ մարմինն է իրավասու կատարել և ինչպես պետք է այդ մարմինները համագործակցեն իրար հետ հանցավորության դեմ պայքարում:

Կարևոր նշանակություն ունի «Ռազմական ոստիկանության մասին» օրենքի ընդունումը, որով կկանոնակարգվի ոստիկանական գործառնություններ ունեցող և մինչ այժմ առանց համապատասխան օրենսդրության գործող ռազմական ոստիկանության գործունեությունը: Օրենսդրորեն կարգավորված չի նաև ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության գործունեությունը, նպատակահարմար է «Ոստիկանության մասին» օրենքի առանձին բաժնում ամրագրել քննչական գլխավոր վարչության գործառնությունները, որով կարելի է խուսափել ոստիկանության այդ ստորաբաժանումում հնարավոր կոռուպցիոն դրսևորումներից:

Կոռուպցիոն դրսևորումների նվազմանը կարող է նպաստել պետավտոտեսչությունում նախատեսվող համակարգային բարեփոխումները: Կարևոր է նաև «Ճանապարհային երթևեկության մասին» օրենքից բխող նորմատիվ ակտերի ընդունումը, որոնք ոչ միայն կսահմանափակեն այդ համակարգում առկա կոռուպցիոն ռիսկերը, այլ նաև կնպաստեն միջազգային չափանիշներին համապատասխան ճանապարհային ոստիկանության ստեղծմանը:

Ազդեցության ոլորտների պահպանման նպատակով հաճախ ձևավորվում են քիկնագործեր, որոնց գործունեությունն օրենքով կարգավորված չէ և իր մեջ կոռուպցիոն մեծ ռիսկեր է պարունակում: Հնարավոր բազասական հետևանքներից խուսափելու համար անհրաժեշտ է ընդունել «Թիկնագործային ծառայության մասին» օրենք, որով կսահմանվի քիկնագործ ունեցող անձանց և քիկնագործերի գործունեության շրջանակը:

Իրավապահ մարմինների գործունեությանը մեծապես կարող է խթանել այլընտրանքային մասնավոր խուզարկումների հնարավոր տիպի ձևավորումը, որի առկայությունը կարող է հակազդիչ դեր ունենալ իրավապահ մարմիններում առկա կոռուպցիոն դրսևորումներին: Այդ առումով կարևորվում է «Մասնավոր խուզարկումների մասին» օրենքի ընդունումը:

Կոռուպցիայի հետ կապված իրավախախտումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման, հաշվետվության և վիճակագրության վարման նպատակով կարևորվում է վիճակագրության ժամանակակից հստակ մեխանիզմների մշակումն ու ներդրումը:

Արդեն իսկ ընդունվել և գործողության մեջ են դրվել «Ոստիկանությունում ծառայության մասին» եւ «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքները, որոնք անչափ կարևոր հակակոռուպցիոն նշանակություն ունեցող իրավական ակտեր են, քանի որ դրանցով փորձ է արվել հստակորեն սահմանել և կանոնակարգել ծառայության անցնելու կարգն ու պայմանները, ծառայության հետ կապված՝ ծառայողների իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, իրավական ու սոցիալական երաշխիքները: Իսկ «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրը» օրենքի ընդունումը վերը նշված օրենքների հետ միասին նպատակ ունի կարգավորելու ոստիկանությունում ծառայողական քննություն նշանակելու, անցկացնելու, ոստիկանության ծառայողներին խրախուսելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգն ու պայմանները, ոստիկանության ծառայողի էթիկայի կանոնները, ծառայողական կարգապահության ամրապնդման հետ կապված այլ հարաբերություններ: Այդ օրենքով ապահովվելու է նաև ոստիկանությունում ծառայության շահերի անձեռնմխելիությունը հնարավոր հակաիրավական ոտնձգություններից՝ բացառելով շահերի բախումը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում կատարված փոփոխություններն առաջ են բերել «Դատախազության մասին» նոր օրենքի ընդունման

անհրաժեշտություն, որտեղ հստակորեն պետք է ամրագրվեն դատախազության աշխատակցին ներկայացվող միջազգայնորեն ընդունված պահանջները, հատկապես ուշադրություն դարձնելով շահերի բախման խնդրի վրա:

Գլուխ VII. Դատական համակարգ

Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումները թևակոխել են երկրորդ փուլ, որով նախատեսվում է ամրապնդել դատական համակարգի անկախությունը: Այդ առումով կարևորություն են ձեռք բերում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեով հաստատված դրույթների կատարմանն ուղղված միջոցառումները: Այդ առումով կարևորվում է դատական օրենսգրքի ընդունումը, որով օրենսդրական կարգավորում կստանան դատական համակարգին առնչվող բոլոր խնդիրները:

Դատական համակարգում կոռուպցիայի կանխարգելման և դատական անաչառության ապահովման համար մեծ նշանակություն ունի միջազգային պրակտիկայում կիրառվող գործերի՝ այբբենական, վիճակահանության կամ ավտոմատ ձևերով բաշխման կարգի հաստատումը:

Անկախ դատական համակարգը կոռուպցիայի դեմ պայքարի գլխավոր գործիքներից է: Անհրաժեշտ է շարունակել դատական համակարգի բարեփոխումների գործընթացը՝ այն վերջնականապես միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու համար:

Գործող օրենսդրությամբ դեռևս կարգավորված չեն դատարանների նախագահների պաշտոնավարման ժամկետները: Միջազգային պրակտիկայում կիրառվում են դատարանների նախագահների պաշտոնավարման կոնկրետ ժամկետներ: Անհրաժեշտ է դատարանների նախագահների պաշտոնավարման ժամկետը սահմանել 5 տարի՝ պայմանով, որ նույն անձը չի կարող ավելի քան 2 անգամ անընդմեջ նշանակվել դատարանի նախագահի պաշտոնում:

Հակակոռուպցիոն պայքարում կարևոր նշանակություն ունի Վարչական դատավարության մասին օրենքի ընդունումը, որպես մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության երաշխիք, երբ անձը հնարավորություն կունենա մասնագիտացված դատարանում վիճարկելու իր խախտված իրավունքները և պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց գործողություններն ու որոշումները: Այդ առումով կարևորվում է Հայաստանի Հանրապետությունում վարչական դատարանների ստեղծման անհրաժեշտությունը:

Կարևոր է նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի ընդունումը, որի անկատարությունը մի կողմից և բազմաթիվ դրույթների չօգտագործման հանգամանքը մյուս կողմից, տեղիք են տալիս կոռուպցիոն չարաշահումների:

Դատական ակտերի մատչելիության և հանրապետությունում դատական միասնական պրակտիկայի ձևավորման նպատակով կարևոր նշանակություն ունի ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների տեղեկագրի հրատարակումը, որը կնպաստի նաև դատական նախադեպային իրավունքի ձևավորմանը: Դատական ակտերի մատչելիությանը մեծապես կնպաստի նաև արխիվային ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմամբ Ազգային դատական արխիվի ստեղծումը՝

Կոռուպցիայի դեմ պայքարի կարևոր գործոններից են դատավորների որակավորման բարձրացման և սոցիալական վիճակի բարելավման խնդիրները: Կարևորվում է դատարանների նախագահների խորհրդի աշխատակազմում գործող ուսուցման կենտրոնի հնարավորությունների արդյունավետ օգտագործումը: Այդ նպատակով պետք է առաջին ատյանի, քրեական և զինվորական վերաքննիչ դատարանների և վճռաբեկ դատարանի քրեական եւ զինվորական գործերով պալատի դատավորների համար կազմակերպել կոռուպցիոն հանցագործությունների քննության առանձնահատկությունները պարզաբանող ուսուցում: Այս առումով մի շարք քայլեր արդեն իսկ արված են, սակայն նպատակահարմար է ստեղծել դատական ուսումնական կենտրոն: Դատական համակարգը համապատասխան կադրերով համարելու խնդիրը նույնպես կոռուպցիայի դեմ պայքարի կարևոր օղակներից է: Այդ առումով կարևորվում է դատավորների թեկնածուների վերապատրաստման արդարադատության բարձրագույն դպրոցի ստեղծումը, որտեղ ապագա դատավորները կսովորեն դատավորի աշխատանքի նրբություններն ու հմտությունները:

Դատական միասնական վարչարարության հաստատումը կնպաստի գործերի քննության ժամկետների ձգձգումների վերացմանը: Այդ նպատակով կարևորվում են դատական վարչարարության միասնական հրահանգի մշակումը, դատարանների տեխնիկական հագեցվածության ապահովումը:

Դատարանների աշխատակազմերի աշխատակիցների հրավական վիճակի, հրավունքների և պարտականությունների ոչ բավարար կանոնակարգումը, համապատասխան նորմատիվ ակտերի բազակայություն կոռուպցիոն մեծ ռիսկեր են պարունակում: Այս առումով կարևորվում է «Դատարաններում ծառայության մասին» օրենքի ընդունումը, որը կնպաստի այդ ոլորտում կոռուպցիոն հնարավոր երևույթների հաղթահարմանը, միաժամանակ, այդ օրենքով կսահմանվեն դատարաններում ծառայողներին ներկայագվող միասնական պահանջները: Կարևորվում է նաև վերաքննիչ, տնտեսական և վճռաբեկ դատարանների գործավարության մասին հրահանգների մշակումը:

ՀՀ քրեական օրենսգրքում պաշտոնատար անձի կողմից առանց նախնական պայմանավորվածության նվազագույն աշխատավարձի հնգապատիկը չգերազանցող արժեքով նվերի ստացումը թույլատրող դրույթը հակասության մեջ է «Քաղաքացիական ծառայության մասին», «Հարկային ծառայության մասին», «Մաքսային ծառայության մասին» և մի շարք այլ օրենքների հետ, և իր մեջ պարունակում է կոռուպցիոն ռիսկ: Ուստի, նպատակահարմար է վերանայել ՀՀ քրեական օրենսգրքի այդ դրույթը: Այդ առումով նվերների ստացման նկատմամբ մշտական վերահսկողություն հրականագնելու և շահերի բախումից խուսափելու համար վերամշակման կարիք է գգում «Պաշտոնի բերումով ստացված նվերները պետությանը հանձնելու մասին» 1993թ. փետրվարի 17-ի ՀՀ կառավարության որոշումը:

Կոռուպցիայի դեմ պայքարի տեսանկյունից անչափ կարևոր է նաև վկաների պաշտպանության ուժեղացումը: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ այն կարևոր գործիք կարող է հանդիսանալ հանցագործությունների բացահայտման և կանխման համար: Չնայած գործող քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունը, սակայն դրանք բավարար չեն վկայի պաշտպանության համար: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է նախատեսել վկայի պաշտպանության ապահովման նոր կարգ, որով կսահմանվեն այդ պաշտպանության իրականացման մեխանիզմները, կհստակեցվեն, թե որ մարմինն է իրականացնելու այդ պաշտպանությունը, անհրաժեշտության դեպքում ով է զբաղվելու նրանց համար նոր կենսագրության ստեղծման, անվտանգության ապահովման, տեղափոխման, ֆինանսավորման, հետագա զբաղվածության, բժշկական օգնության, փոստային կապերի կարգավորման հարցերով:

Սակայն դատական համակարգում ցանկացած փոփոխություն առանց դատավորների սոցիալական վիճակի բարելավման արդյունավետ չի կարող լինել, ուստի անհրաժեշտ է պարբերաբար բարձրացնել դատավորների աշխատավարձը:

Դատական ակտերի հարկադիր կատարումը դատավարության կարևորագույն փուլերից է: Ի տարբերություն քաղաքացիական ծառայության, դատական ակտերի հարկադիր կատարումը հատուկ ծառայության տարատեսակ է, որը սահմանվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության մասին» օրենքով: Վերջինս հիմք կհանդիսանա ծառայության կայունությունն ու բնականոն առաջխաղացումն ապահովող համակարգի ձևավորմանը: Օրենքը նախատեսում է ծառայողների համար համապատասխան սոցիալական և իրավական երաշխիքներ:

Անհրաժեշտ է բարելավել նաև քրեակատարողական ծառայության աշխատանքները: Այդ նպատակով ընդունված օրենքներով կարգավորվում են քրեակատարողական բնագավառի հետ կապված հարաբերությունները՝ սահմանելով դրանց մասնակիցների իրավունքները և պարտականությունները: Դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերի ամբողջական փաթեթի մշակումով կհստակեցվի բնագավառի հետ կապված գործընթացները, պաշտոնատար անձանց, ինչպես նաև ձեռբակալված անձանց իրավունքները և պարտականությունները: Անհրաժեշտ է կատարելագործել նշված ծառայության աշխատողների ընտրության, առաջխաղացման, ծառայությունից դուրս գալու, որակավորման բարձրացման մեխանիզմները, ապահովել ոլորտի աշխատանքների առավել թափանցիկությունը:

Դատական համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի կարևորագույն օղակներից մեկն անկախ փաստաբանական ինստիտուտի ձևավորումն է: Նոր օրենքի ընդունմամբ հստակեցվեց փաստաբանական ինստիտուտի դերը: Օրենքի կիրառման փուլը պետք է

Նպաստի ոչ միայն այդ հնստիտուտի կայացմանը, այլ նաև այդ համակարգում արմատավորված կոռուպցիայի նավագմանը:

Միջնորդ դատավարությունը դատական համակարգի այլընտրանքային ձև է: Համաձայն ՄԱԿ-ի «Միջնորդ դատավարության որոշումները ճանաչելու և ի կատար ածելու մասին» Կոնվենցիայի՝ միջնորդ դատարանի որոշումները ենթակա են կատարման նաև այլ երկրներում: Ելնելով վերոհիշյալից՝ նպատակահարմար է միջնորդ դատարանների մասին օրենսդրությունը համապատասխանեցնել ՄԱԿ-ի Կոնվենցիայի պահանջներին:

Եզրափակիչ դրույթներ

Հակակոռուպցիոն ռազմավարությունը պետության և հասարակության կողմից բազմակողմանի և հաջորդական միջոցառումների իրականացում է՝ կոռուպցիան ծնող և նրան նպաստող պատճառների և պայմանների վերացման (նվազեցման) ուղղությամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կոռուպցիան առանց մշտական հակազդման ունի ընդլայնվելու և շրջապատին հարմարվելու միտում, անհրաժեշտ է, որպեսզի այդ քաղաքականությունն առանձնացվի որպես պետության կարևորագույն խնդիրներից մեկը: Խոսքը գնում է ինչպես մեխանիզմների ստեղծման մասին, որոնք թույլ են տալիս կարճաժամկետ առումով փոքրացնել կոռուպցիայի մասշտաբները, այնպես էլ հակակոռուպցիոն համակարգային քաղաքականության իրականացման մասին՝ որպես պետության մշտապես գործող օրգանական գործառույթ: Այդպիսի ծրագրերի մշակումը և իրականացումը պետք է հիմնվի կոռուպցիայի բնույթի ճիշտ ընկալման, դրա դեմ պայքարի անհաջողությունների պատճառների բացահայտման և վերլուծության, գոյություն ունեցող նախադրյալների և սահմանափակումների գիտակցության, ինչպես նաև հստակ և արդյու նավետ մեթոդների ու սկզբունքների վրա:

Կոռուպցիայի դեմ պայքարը չի ենթադրում միանգամյա գործողություն կամ գործողությունների շարք, այլ պահանջում է միջոցառումների շարունակական համակարգ (ամրագրված սույն ռազմավարությամբ), որի պարագայում այդ պայքարը կհանդիսանա պետական քաղաքականության անհետաձգելի խնդիրներից մեկը, իսկ պետության կողմից իրականացվող գործառույթների ցանկում կզբաղեցնի առաջնային տեղ:

Հասարակական հարաբերությունները գտնվում են անընդհատ զարգացման (դինամիկայի) մեջ և ձեռնարկվող միջոցառումները, որոնք գործուն և հրատապ են այսօր՝ վաղը կարող են լինել հնացած, ժամանակավրեպ, ավելին, նոր հարաբերությունների մթնոլորտի ձևավորման պայմաններում կարող է անհրաժեշտություն առաջանալ ստեղծել կոռուպցիայի դեմ պայքարի նոր, դեռևս չկիրառված մեթոդներ և ձևեր:

Ամփոփելով վերոգրյալը, հակակոռուպցիոն ռազմավարությունը հարկավոր է եզրափակել այն անխախտ սկզբունքների ամրագրմամբ, որոնց հիմքի վրա պետք է կառուցվեն կոռուպցիայի դեմ պայքարի միջոցներն ու մշակվեն ուղղությունները: Դրանք են՝

- օրենքի գերակայություն և անկողմնակալություն,
- անընդհատություն և շարունակականություն,
- հրապարակայնություն և թափանցիկություն:

